

48.55

64

891.85

U-40

9011

1208

891.85-3

U-40

Հենրիկոս Սիսկեհիզ:

ԳԱՄԱՔ ՆՈՐԱ ՅԵՏԵՒԻՑ

Թարգմանեց

Տիգրան Վարդանեսնազ:

Ա.ԽՍԼ.ՑԽԱ.

Տպարան Խորէն Առմարեանցի.

1896.

891/52-3
4-40
Արքայի Հայոց Պատմութեան Տառապահ
Արքայի Հայոց Պատմութեան Տառապահ
Կանոնական Արքայի Հայոց Պատմութեան Տառապահ

Կանոնական Արքայի Հայոց Պատմութեան Տառապահ



ԳՆԱԽԲ ՆՈՐԱ ՅԵՏԵՒԻՑ:

1002
5912

21

Թարգմանեց
Տիգրան Վարդանյանը
"Մարտահայուսակ
իմբաշալ" թարգմանուածն.

ԱԽԱԼՑՈՂ

Տպարան Խորէն Ասմարեանցի

1896.



Дозволено цензурою. Тифлисъ, 1 Августа 1896 г.

I.

Կայսոս Սիմառիմիոս Կիննան հոռվմտյեցի պատրիկ էր. նա իր երիտասարդութիւնն անցկացրեց լեգէոններում, ենթարկուելով զինուորական կեանքի բոլոր խստութիւններին: Աւելի ուշ նա վերադարձաւ հոռվմ՝ զուարճանալու փառքով, ճոխութեամբ և իր մեծ, թէւ փոքր ինչ քայլայուած կարողութեամբ: Հենց այդ ժամանակներն էր, որ նա զուարձացաւ և յագեցաւ այն ամենով, ինչ որ կարող էր տալ հսկայական քաղաքը: Գիշերները նա անցէր կացնում քաղաքից գուրս հոյակապ ապարանքներում ուրախութեան և խրախճանքի մէջ, իսկ ցերեկները սուսերամարտում էր մարմնամարզների մօտ, խօսում ու վիճաբանում էր ճարտասանների հետ հասարակական բաղնիսներում, ուր տեղի էին ունենում պայքարներ ու բանակուիւներ, և միւնոյն ժամանակ պատմվում էին քաղաքի ու հասարակութեան մէջ եղած բամբասանքները. նա ներկաւ էր լինում կրկէսներին, ուր վագում կամ մենամարտում էին ըմբիշտները. նա օրերն անց էր կացնում լոյն վինածուների, Փրագոնիալի հմայող

և արշիպեղագոսի կղզիներից բերուած պարող չքնարգեղ կանանց շրջանում։ Նա մօր կողմից տղգական լինելով մի ժամանակ մեծահռչակ Լուկուլոսին, ժառանգեց նորանից անսահման սէր դէպի համարամ ու քաղցրահամ կերակուրները։ Նորասեղանի վերայ գործածուող գինին բերվում էր Յունաստանից, ոստրէները—Նէապոլից, խեցգետինները—Նուժիդիալից և հաստիկ ու սեղած մորեխները—Պոնտոսից։ Այն ամենը, ինչ որ ունէր հոռվմը, պիտի ունենար և կիննան, սկսած կարմիր ծովի ձկներից մինչև Բօրիսֆէնի տփերից ստացուող սպիտակ կաքաւները։ Սակայն նա զուարժանում էր ոչ միայն որպէս զինուոր, այլ և որպէս պատրիկ, որն իմանում էր իր քմապաշտութեան գոհացումն տալ։ Նա իր մէջ զարգացրեց, գուցէ և ալծարծեց, նուբբ ճաշակ դէպի գեղեցիկ իրերը՝ դէպի Կարկեթոնի մոփրակուտերի տակից գուրս հանուած արձանիկները, Աստիկայից բերուած փղոսկրեայ քանդակները, Ետտուսիայի կամ մառախլապտո Մերիկումից բերուած ծաղկանօթները, Հուովմի մանրանկարները, Եփրատի ափերից ստացուող թանկագին գործուացքները, արտբական անուշհռտ իրերը և դէպի սոցա նման այն ամեն տարօրինակ բաները, որոնք ամբողջապէս լցնում էին հոռվմայեցի պատրիկի կեանքի դատարկութիւնը։

Բայց և այնպէս, որպէս սիրող ու հասկացող մարդ՝ նա կարող էր նոցա մասին վիճաբանել այն անատամ ծերերի հետ, որոնք ճաշերի ժամանակ իրանց ճաղատ գլուխները զարդարում էին վարդի պսակներով, իսկ ինճուքներից յետով շնչառութեան անուշահոտութիւն տալու համար ծամում էին արևադիմի ծաղիկներ։ Նա շատ զգայուն էր դէպի Կիկերոնի դարու գեղեցկութիւնը և Հօրացիոսի կամ Օվիդիայի ոտանաւորները։ Դաստիարակուած լինելով աթենացի ճարտասանի մօտ՝ նա ճարտար խօսում էր յուներէն, անգիր իմանում էր ամբողջ հաստուածներ „Եղիտականից“ և ինճուքների ժամանակ այնքան էր երգում, մինչև որ կամ բոլորովին կը հարթէր, կամ կը քնէր։

Ենորհիւ իր ուսուցչի և միւս ճարտասանների՝ նա ծանօթացաւ փիլիսոփայութեան հետ և այնքան ընտէլացաւ նորան, որ հասկացաւ Ելլադայում ու գաղութներում կառուցուած այլեւայլ փիլիսոփայական շնչքսերի ճարտաբապետութիւնը, հասկացաւ նոյնպէս և այն, որ նոքա բոլորն էլ փլատակներ են եղել. նա անձամբ ճանաչում էր շատ ստորիկեանների, դէպի որոնք մի տեսակ հակարութիւն ունէր, որովհետեւ նոցա աւելի քաղաքական կուսակցութիւն էր համարում, և բացի այս նոքա մռայլ մարդիկ էին և թշնամի ուրախ կեանքի։ Ակեպտիկները՝

լաճախ բազմած նորա սեղանին և վայելով համագամ կերակուրներ՝ հերքում էին ամբողջ սիստեմներ և դատարկելով գինու լիք բաժակները՝ նոքաճոռոմաբանում էին, թէ զուարճութիւնը ունայնութիւն է, ճշմարտութիւնը մի ինչ որ անշմբոնելի ու անհասանելի բան է, և թէ իմաստունի միակ նպատակը կարող է լինել մեռելալին անդորրութիւնը:

Այդ բոլորն աղմկում էր նորա լսելիքը, բայց չէր թափանցում մինչև հոգու խորքը: Նա ոչ մի սկզբունք չէր դաւանում և չէր էլ ցանկանում ունենալ: Նա Կատոնի պատկերի մէջ տեսնում էր մեծ բնաւորութեան միացումը մեծ լիմարութեան հետ. նա կեանքը նմանեցնում էր ծովի, որի վրայ փչում են քամիները դէպի այն կողմը, ուր կամենում են, իսկ իմաստութիւն նա համարում էր այն հմտութիւնը, թէ ինչպէս յարմարեցնել առագաստները, որ նոքա առաջ մզեն նաւակը: Բացի դորանից նա գնահատում էր լայն թիկունքը, առողջ ստամոքսը և արծուաքիթ կիսագէմքով ու զօրեղ ծնօաներով հռովմէական գեղեցիկ գլուխը, — այսինքն այն ամենը, ինչ որ ունէր ինքը: Եւ նա հաւատացած էր, որ դորանցով էլի մի կերպ կարելի է կըճատել կեանքը:

Զպատկանելով սկեպտիկների դպրոցին՝ նա կեան-

քի մէջ սկեպտիկ էր, նա միևնոյն ժամանակ և ստոլիկ էր, թէև ընդունում էր, որ զուարճութիւնը երջանկութիւն չէ: Եպիկուրի իսկական վարդապետութիւնը նա չգիտէր, այս պատճառով էլ իրան էպիկուրեան էր համարում: Ընդհանրապէս վիլիսովայութիւնը նա համարում էր մտաւոր սուսերամարտութիւն, որը նոյնքան լաւ էր, որքան և ալն, որը նորան սովորեցնում էին սուսերամարտները: Երբ խօսակցութիւնները ձանձրացնում էին նորան, նա դիմում էր կրկէս՝ արեան տեսարաններ դիտելու:

Սատուածներին նա չէր հաւատում, ինչպէս և բարեգործութեան, ճշմարտութեան և երջանկութեան: Նա հաւատում էր միայն կանխագուշակութեան և ունէր իր նախապաշարմունքները, և բացի այս, արևելքի խորհրդաւոր հաւատալիքները գըրգում էին նորա հետաքրքրութիւնը: Մտրուկների համար նա բարի տէր էր, եթէ միայն ըոպէական ձանձրոյթը նորան չէր հասցնում խստութեան: Նա ենթագրում էր, թէ կեանքը մի վիթխարի գաւաթ է, որի արժէքը նոյնքան աւելի բարձր է, որքան աւելի ազնիւ տեսակից է այն գինին, որ ածուած է նորա մէջ. հետևապէս, նա աշխատում էր իր գաւաթը լցնել ամենաազնիւ տեսակով: Նա ոչ ոքի չէր սիրում, բայց սիրում էր շատ իրեր, ի մի-

ջի այլոց և իր աբժուխ գլուխը սիզապանձ գանկով
և իր վայելչակազմ պատրիկեան ոտները:

II.

Վերջապէս նա սնանկացաւ. պարտատէրերը
նորա կարողութիւնը մաս-մաս բաժանեցին: Այդ
բոլորի փոխարէն կիննալին բաժին մնաց միայն
յոգնածութիւնը՝ իբր մի ծանր աշխատանքից յետոյ,
յագեցողութիւնը և մի այլ, բոլորովին անսպասելի
բան, այն է՝ մի տեսակ հոգեկան խոր վրդովմունք:
Զէ՛ որ նա ճաշակեց հարստութեան պտուղը, ճա-
շակեց սէրն, ինչպէս նորան հասկանում էր հին
աշխարհը, ճաշակեց զուարճութիւն, ճաշակեց պա-
տերազմական կեանքի փառքը, ճաշակեց վտանքն
ու փորձանքը, փոքր ի շատէ ծանօթացաւ մարդ-
կալին մտքի հոսանքի հետ, շփուեց բանաստեղծու-
թեան և գեղարուեստի հետ, այնպէս, որ նա
համարձակ կարող էր ասել, որ ինքը կեանքից
վերցրել է այն ամենը, ինչ որ նա կարող էր
տալ նորան: Սակայն նորա մէջ տիրապետում էր
մի այնպիսի գգացմունք, որի ազգեցութեան տակ
նա արհամարում էր այժմ մի ինչ որ բան և մին-
չև անզամ մի շատ նշանաւոր բան: Բայց նա չէր
իմանում, թէ դա ինչ բան է, և իգուր էր աշխա-
տում գտնել նորան: Յաճախ նա մգնում էր իրա-

նից՝ ի բաց թօթափել այդ խորհրդածութիւնները
և այդ վրդովմունքը, ճգնում էր համոզել իրան,
թէ այլես կեանքի մէջ ոչինչ չկար, և չի էլ կա-
րող լինել, բայց այդ ժամանակ նորա վրդովմունքը
մեղմանալու փոխարէն իսկոյն սկսում էր աճել. և
նորան թուում էր, թէ ինքը վրդովմում է ոչ միայն
իրան, այլ և ամբողջ Հռովմի համար: Նա միեւնոյն
ժամանակ նախանձում էր սկեպտիկներին և ամիեւ-
նոյն ժամանակ նոցա լիմարներ էին համախումում, ո-
րովհետեւ նոքա պնդում էին գատարկութիւնը
կարելի է ոչնչով լցնել: Նորա մէջ այժմ, կարծես,
երկու մարդ կար, որոնցից ենթամէկը գարմանք էր
յալտնում իր սեփական վրդովմունքին, միւսն
ակամայ ընդունում էր նորա օրինականութիւնը:

Կիննան՝ իր կարողութիւնը կորցնելոց փոքր
ինչ յետոյ, շնորհիւ ազգակցական կապերի՝ պաշտօն
ստացաւ Աղէքսանդրիայում, մասամբ և այն նպա-
տակով, որ նա իր համար նորից հարստութիւն դի-
զէ: Վրդովմունքը նորա հետ նաւ նստեց Բրուն-
դիզիայում և ուղղեկցում էր նորան ծովի վերալ:
Կիննան մտածում էր, թէ Աղէքսանդրիայում գուցէ
պաշտօնական գործերը, նոր մարդիկ, նոր աշխար-
հը և նոր տպաւորութիւններն իրան կազատեն այդ
յանգուգն ուղղեկցից, բայց սխալուեց: Անցաւ մի
ամիս, երկու ամիս և երկրագործութեան աստուա-

ծուհի Դեմեգրայի Խտալիալից նեղոսի գետաբերանը փոխադրած հատիկի նման, այդ վրդովմունքը հասարակ թփից դարձաւ փարթամ մայր ծառ և սկսեց աւելի մեծ ստուեր ձգել Կիննալի հոգու վերայ:

Սկիբը Կիննան աշխատում էր՝ ամեն բան մոռացութեան տալով՝ վերադառնալ այն կեանքին, որպիսին վարում էր Հռովմում։ Աղեքսանդրիան սքանչելի քաղաք էր. նա լի էր շիկահեր յոյն գեղեցկուհիներով, որոնց քնքոյշ ու սպիտակ կաշուն եգիպտական երկինքը տուել էր թափանցիկ սաթի գոյն։ Ա.Հ. սոցա գրկումն էր նա աշխատում թեթևութիւն գտնել։ Բայց երբ այդ փորձն էլ իզուր անցաւ, նա սկսեց անձնասպանութեան վերայ մտածել։ Նորա ընկերներից շատերը կեանքի հոգսերից ազատուել էին ուղիղ հենց այդ ձեռվ, և այն էլ գրդուած աւելի աննշան առիթներից, քան Կիննալին էր. օրինակ, յաճախ ձանձրոյթից միայն, անգործութիւնից, կամ ապագայում ալլես զուարձանալու ցանկութեան բացակայութիւնից։ Եթէ ստրուկը սուրբ յարմար և բաւական ամուր էր պահում, մի ըոպէն էլ բաւական էր ամեն բան վերջացնելու։ Կիննան հակուեց դէպի այդ միտքը և երբ համարեա վճռել էր իրագործել նորան, մի սարսափելի երազ իւտ կանգնեցրեց նորան այդ մտադրութիւնից. նա երազում տեսաւ, որ երբ

իրան անց էին կացնում գետով, գետի միւս ափին ստրկի նիհար ու մաշուած կերպարանքով տեսաւ իր վրդովմունքի ուրուտկանը, որը գլուխ տալով ասաց նորան. „Ես քեզանից առաջ անցայ, որ գիմաւորեմ քեզ։“ Կիննան իր կեանքում առաջին անգամ վախեցաւ, որովհետեւ նո հասկացաւ, որ եթէ ինքը հանդերձեալ կեանքի մասին առանց վրդովմունքի չի կարող մտածել, այն ժամանակ նոքա այնտեղ էլ միասին կը գնան։

Վերջապէս նա վճռեց մօտենալ իմաստուններին, որոնցով լիքն էր Սերապէտմը, կարծելով, թէ գուցէ նոցա մօտ կը գանի հանելուկի լուծումը։ Իսկապէս նոքա ոչինչ բացատրութիւն տալ չկարողացան նորան, բայց գորա փոխարէն նորան յունարէն կոչեցին այն տիտղոսով, որով առ հասարակ մեծարում էին բարձր ծագում և նշանակութիւն ունեցող հռովմայեցիներին։ Սկզբում գա վատ միսիթարութիւն էր, և իմաստունի տիտղոսը՝ որ արուած էր մի այնպիսի մարդու, որը չէր կարողանում պատասխանել այն հարցին, որն ամենից առաւել իրան հետաքրքրում էր՝ Կիննալին կարող էր մի անսակ ծագում թուալ. սակայն նա ենթագրում էր, թէ Սերապէտմը մի անգամից բաց չի անել նորա առաջ իր բոլոր իմաստութիւնը և նա յոյսը գեռ բոլոր վին չէր կորցրել։

Աղէքսանդրիակէ իմաստունների մէջ ամենազործունեան ազնուատոհմ Տիմոն աթենացին էր, որ հարուստ մարդ էր և Հռովմի քաղաքացի: Նա արդէն մի քանի տասնեակ տարի կը լինէր, որ ապրում էր Աղէքսանդրիայում, ուր նա եկել էր ուսումնասիրելու եգիպտական խորհրդաւոր գիտութիւնները. նորա մասին ասում էին, թէ մատենագրանում չկայ մի մագաղաթ կամ պատիրուս, որը նա կարգացած չ'լինէր, և թէ նա իմանում էր մարդկալին բոլոր գիտութիւնները: Միենոյն ժամանակ նա հեզ ու ներողամիտ մարդ էր: Բազմաթիւ իմաստակների և բժամիտ մեկնաբանների շարքում, Կիննան իսկոյն նկատեց նորան և շուտով նորա հետ ծանօթութեան կտալ հաստատեց, որն ապա փոխուեցաւ ընկերութեան և մինչև իսկ բարեկամութեան: Հռովմայեցի երիտասարդը զարմանում էր նորա մտատանջութեան, պեճախօսութեան և տրամաբանութեան մէջ ունեցած այն հըմտութեան, որով խօսում էր ալեզարդ ծերունին բարձր ու վսեմ առարկաների մասին, որոնք վերաբերում էին մարդու և աշխարհի ապագայ վիճակին. նորան աւելի զարմացնում էր այն, որ այդ մտատանջութիւնն իր մէջ որոշ չափով պարունակում էր թախիծ ու տրտմութիւն: Աւելի ուշ, եթէ նոքա մտերմացան, Կիննան բազմիցս ցանկացաւ

հարցնել ծերունի իմաստունին նորա թախիծի պատճառը և խնդրեց նորան բաց անել իր առաջ իր սեպհական սիրազ: Վերջապէս հերթը հասաւ և դորան:

III.

Մի անգամ երեկոյեան հոգեբանութեան մասին աղմկալից վիճաբանութիւն ունենալուց յետոյ՝ նոքա մնացին ճակատ առ ճակատ աստիճանների վերայ, որտեղից բացվում էր հոգեզմալ տեսարան գէպի խաղաղ ծովը: Կիննան բռնեց Տիմոնի ձեռքը և ամենայն անկեղծութեամբ յալտնեց նորան այն, ինչոր կազմում էր իր կեանքի մեծագոյն տանջանքը և խոստովանուեց, թէ ինչ պատճառներից ստիպուած՝ ինքն աշխատում էր մօտենալ Սերապէումի գիտնականներին ու վիլիսովիաներին:

— Յամենայն դէպս ես շահեցալ այն, ասաց նա վերջապէս, որ ծանօթացալ քեզ հետ, Տիմոն, և հիմա իմանում եմ, որ եթէ դու չլուծես իմ կեանքի հանելուկը, այն ժամանակ ոչ ոք չի կարողանալու անել այդ:

Տիմոնը մի առ ժամանակ նայում էր գէսի ծովի հայելանման մակերեսովիթ, որի մէջ անդրադառնում էր նոր լուսինը, և յետոյ ասաց.

— Դու տեսնէ՞ ես, Կիննա, այն թուչունների

երամները, որոնք ձմեռը մառախլապատ հիւսիսից գալիս են այստեղ: Դու գիտ՞չ արդեօք, թէ ինչ են որոնում նոքա Եղիպատում:

— Գիտեմ, տաքութիւն և լոյս:

— Մարդկանց հոգիները նոյնպէս որոնումեն տաքութիւն, որ սէրն է և լոյս, որը ճշմարտութիւն է նշանակում: Բայց թուզունները գիտեն, թէ դէպի որ կողմն է իրանց բարւոք թուչել, իսկ մարդկանց հոգիները խարխափում են անորոշութեան, մոլորութեան, մտատանջութեան և երկբայութեան մէջ:

— Ինչու, ազնիւ Տիմոն, նոքա չեն կարող գտնել ճշմարիտ ճանապարհը:

— Առաջ հանգատութիւնն աստուածների մէջ էր, իսկ հիմա հաւատը դէպի աստուածները հատել է, ինչպէս ձիթենու իւղը լապտերի մէջ: Ապա կարծում էին, թէ վիլիսոփայութիւնը հոգիների համար իբրև ճշմարտութեան արեգակ կը ծառալէ: Այժմ, ինչպէս դու ինքդ ամենից լաւ ես իմանում, նորա աւերակների վերայ Հոռվմում և մինչև անգամ Աթէնքի ճեմարանում բազմում են սկեպտիկները, որոնց թւումէ, թէ իրանք կեանքի մէջ հանգստութիւն են ներմուծում, այն ինչ, ներմուծեցին հոգեկան վրդովմունք: Զէ որ լոյսից և տաքութիւնից հրաժարուելլ՝ նշանակումէ հոգին խաւա-

ըի մէջ թողնել, որ ինքն բատ ինքեան վրդովմունք է: Եւ ահա, ձեռներս առաջ պարզած, մենք իսարխափելով որոնում ենք փրկութեան ճանապարհը . . .

— Մէթէ դու էլ չես գտել նորան:

— Որոնեցի և չգտայ: Դու որոնելես նորան զուարծութեան, իսկ ես մտածմունքի մէջ, և մեզ երկուսիս էլ ըրջապատումէ միևնոյն մառախուղը, ուստի իմացիր, որ միայն դու չես վրդովմում ու մտատանջվում, այլ քո մէջ մտատանջվումէ համաշխարհային հոգին: Զէ որ վաղուցէ, որ դու աստուածներին չես հաւատում:

— Հոռվմում մինչև հիմա էլ նոցա հրապարական յարգանք են մատուցանում, և մինչև իսկ Սսիալից ու Եգիպտոսից նորերն են բերվում. բայց անկեղծութեամբ գուցէ նոցա հաւատում են միայն կանաչեղէն վաճառողները, որոնք առաւտները գիւղերից գալիս են քաղաք:

— Եւ նոքա են միակ անվրդով մարդիկը:

— Ուզիշ այնպէս, ինչպէս այստեղ նոքա, որոնք երկրպագութիւն են անում կատուներին և սոխ ու սխտորին. ուզիշ այնպէս, ինչպէս նոքա, որոնք կշտացած կենդանիների նման բացի քաղցր քնից ու լիկ ոչ մի ցանկութիւն չունեն:

— Այդ բոլորից յետոյ արդէ՛ արդեօք ապրել:

— Մէթէ մենք իմանում ենք, թէ ինչ է բե-

ըում մեզ մահը:

— Ուրեմն էլ ինչ տարբերութիւն կայ քո և սկեպտիկների միջև:

— Սկեպտիկները հաշտվում են խաւարի հետ, կամ գոնէ ցոյց են տալիս, թէ հաշտվում են, իսկ ես տանչվում եմ այդ խաւարի մէջ:

— Եւ յոյս չունի՞ս ազատութեան:

Տիմոնը մի բողէ լոեց, ապա ծանր ու մի տեսակ անփռականութեամբ պատասխանեց.

— Սպասումեմ նորան . . .

Ո՞րտեղից:

— Ինքս էլ չգիտեմ:


Յետոյ նա գլուխն առաւ ձեռների մէջ և կարծես աստիճանների վերայ տիրող լուրջեան ազգեցութեան տակ նոյնպիսի կամացուկ ձայնով ասաց.

— Զարմանալի բան է, բայց երբեմն ինձ թւում է, որ եթէ աշխարհն իր մէջ ոչինչ աւել բան չպարունակեր, քան այն, որ մենք իմանում ենք, և եթէ մարդիկ ոչնչով աւել չ'լինեին, քան որ մեզ թւում են ներկայումս, այն ժամանակ մեր մէջ վըրդովմունք չեր լինի: Ուրեմն նշանակում է, թէ ես հիւանդութեան մէջ եմ քաղում առողջութեան յուրաքանչ ։ ։ ։ Հաւատը դէսի Օլիմպոսը և դէսի փելասոփութիւնը մեռաւ, բայց առողջութիւն ասած բանը կարող է մի տեսակ նոր ճշմարտութիւն մի-

նել, որը ես դեռ չգիտեմ:

Հակառակ ակնկալութեան, այդ, խօսակցութիւնը կիննալին մեծ թեթևութիւն պարզեց: Լսելով որ ոչ միայն ինքը, այլ և ամբողջ աշխարհն է հիւանդ, նա այնպիսի մի թեթևութիւն զգաց, որ կարծես մէկը նորա ուսերի վերայից վեր առաւ ահագին բեռը և դրեց նորան հազար ամպ աղութակ ուսերի վերայ:

IV.



Այդ ժամանակից սկսած, կիննանք միանալու թիւնն ալեզարդ յոյնի հետ աւելի ամրապնդուեց.

Հիմա նոքա աւելի յաճախ էին լինում միասին և միմեանց տարակուսանքները բաժանում էին այնպէս, ինչպէս և հացը խնճուքների ժամանակ: Սակայն կիննան, չնայելով իր փորձառութեան և յոդնածութեանը, որը հետեւանք էր յագեցողութեան, դեռ շատ երիտասարդ էր և անկարելի էր, որ կեանքը նորա համար ալլևս թագնուած հրապուրներ չունենար: Եւ այդպիսի մի հրապուր նա գտաւ Տիմոնի միակ դստեր՝ Անթէալի մէջ:

Աղէքսանդրիալում նորա հռչակը իր հօր հռչակից պակաս չէր. նորան երկրպագում էին այն անուանի հռովմայեցիները, որոնք լինում էին Տիմոնի տանը, երկրպագում էին յոյները, երկրպագում

Էին Սերասլէումի փիլիսոփաները, երկրպագում էր և ժողովուրդը: Տիմոնը նորան ուրիշ կանանց նման փակուած չէր պահում հինեկէում և աշխատում էր սովորեցնել նորան այն բոլոր գիտութիւնները, որոնք իմանում էր ինքը: Երբ անցան նորա մանկութեան տարիները, Տիմոնը նորա հետ կարդում էր յունարէն և մինչեւ անգամ հռովմայերէն ու եբրայեցերէն գրքեր, որովհետեւ նա՝ օժտուած լինելով արտասովոր լիշողութեամբ և կրթուած բազմալեզու Աղէքսանդրիայում՝ շուտով սովորեց այդ լեզուները: Նա մտաւոր աշխատութիւնների մէջ անբաժան էր հօրից, յաճախ մասնակցում էր այն խօսակցութիւններին, որոնք տեղի էին ունենում Տիմոնի տանը վիճաբանութիւնների ժամանակ, յաճախ դժուարին խնդիրների լաբեւրինթուում նա Որիադնալի նման կարուանում էր ոչ միայն չ'մոլորուել, այլ և ուրիշներին իր ետքեւ ից քաշ տալ: Հայրը զարմանում էր նորան և լորգում: Բացի այս, նորան շըջապատում էր խորհրդաւորութեան, մինչեւ սրբութեան հասնող խորհրդաւորութեան, մինչեւ սրբութեան հասնող խորհրդաւորութեան լուսապահել, որովհետեւ նա յաճախ այնպիսի տեսիլքներ էր տեսնում, երբ նորան երեսում էին այնպիսի բաներ, որոնք անմատչելի էին հասալակ մահկանացուների տչքերին: Ծերունի իմաստունը սիրում էր նորան, ոչպէս իր սեպհական հոգին և այն պատճա-

ռով, որ երկիւղ էր կըում զբկուել նուանից, որովհետեւ նա յաճախ ասում էր հօրը, թէ երազում իրան երեսում են մի տեօակ չարագուշակ էակներ և մի ինչ որ հրաշալի լոյս, ոչի մասին ինքը չգիտէր, թէ աշդեօք իրան համար կեանքի աղբեւր պիտի լինի, թէ մահու:

Բայց միւնոյն ժամանակ նուան շրջապատում էր միալն սէրը. այն եգիպտացիները, որոնք մենում էին Տիմոնի տանը, նորան լոտոս էին անուսնում, գուցէ այն պատճառով, որ Նեղոսի ափերին այդ ծաղկին աստուածալին յաբգանքներ էին մատուցանում. շատ կաբելի է և այն պատճառով, որ ով մի անգամ տեսնում էր նորան, այնուհետեւ կարող էր մոռանալ ամբողջ աշխարհը.

Նորա գեղեցկութիւնը հաւասարվում էր նորա իմաստութեանը: Եգիպտական արեգակն անգամ չէր թխացրել նուան գէմքը, որի մէջ լոյսի վարդակարմիշ ճառագալթները կարծես ժողովուած լինէին սատափի թափանցիկ գաղտակուբի մէջ: Նորա աչքերը փալում էին Նեղոսի անապակ ջրերի նման, իսկ հալեացքն արտացոլում էր մի այնպիսի անձանօթ և հեռաւոր աշխարհից, որպէս այդ խորհրդաւոր գետի ջրերը: Երբ Կիննան առաջին անգամ տեսաւ ու լեց նորան, տուն վերադառնալով ցանկութիւն զգաց իր տան ատրիումում 'ի պա-

տիւ նորան սեղան կանգնեցնել և նորա վերայ զոհ մատուցանել սպիտակ աղաւնիներ։ Նա իր կեանքում հազարաւոր կանանց էր պատահել՝ սկսած հեռաւոր հիւսիսի սպիտակ թերթեռնքներով ու հասած արտի հասկերի գոյնին նմանութիւն բերող մազերով աղջիկներից մինչև լաւալի նման սև եթօվպացի աղջիկները, բայց մինչև հիմա նա չէր պատահել ոչ ալգալիսի մի սարսնի, ոչ էլ ալգալիսի մի հոգու, Եւ նա որքան աւելի յաճախ էր տեսնում Անթէալին, որքան աւելի մօտ էր սկսում ճանաչել նորան, որքան աւելի յաճախ էր պատահում լսել նորա ձայնը, այնքան աւելի և աւելի էր աճում նորա հիացումը։ Լինում էին բոպէներ, երբ նա, որը չէր հաւատում աստուածներին, ենթադրում էր, թէ Անթէան չի կարող Տիմոնի աղջիկը լինել, այլ մի որևէ չ աստուծու, հետևապէս, նա կիսով չափ մարդ է և կիսով չափ անմահ։

Եւ շուտով նա սիրեց նորան մի անսպասելի, անսահման և անզուսապ սիրով, որը նոյնպէս զանազանվում էր մինչև այդ ժամանակ ունեցած զգացմուքներից, ինչպէս Անթէան միուս կանանցից։ Նա ուզում էր տիրապետել Անթէալին միայն նորա համար, որպէս զի յարգանք մատուցանէ նորան և նորան տիրելու համար նա պատրաստ էր թափել իր արիւնը. նա զգում էր, որ նախապատիւ է համարում

նորա հետ աղքատ լինել, քան առանց նորան կալսրէ Եւ ծովալին ջրապոյտի նման, որն անզուսապ զօրութեամբ դէպի ինքն է քաշում այն ամենը, ինչ որ ընկնում է նորա մէջ, Անթէալի սէրը գրաւեց նորա հոգին, նորա սիրու, նորա օրն ու գիշերը և այն ամենը, որից բաղկացած է կեանքը։

Վերջապէս, այդ սէրը համակեց և Անթէալին։

— Դու երջանիկ ես, Կիննա, կրկնում էին նորա բարեկամները։ Դու երջանիկ ես, Կիննա, կրկնում էր և ինքը։ Եւ երբ, վերջապէս, պսակուեց նորա հետ և նորա աստուածալին շրթունքներն արտասանեցին ծիսի սրբազն խօսքերը. — Ուր գու կը լինիս, Կայոս, այնտեղ և ես կը լինեմ, այն ժամանակ նորան թուաց, թէ իր երջանկութիւնը ծովի նման անսահման և անսպասելի պիտի լինի։

V.

Անցաւ մի տարի, և մատաղահաս կինը շարունակում էր ապրել հայրական տան մէջ՝ շրջապատուած համարեա աստուածալին յարգանքով։ Նա իր մարդու աչքի լոյսն էր, սէրն էր, իմաստութիւնն էր, լոյսն էր։ Բայց կիննան իր երջանկութիւնը համեմատելով ծովի հետ՝ մոռացաւ, որ ծովը տեղատուութիւն էլ ունի։ Մի տարուց յետոյ Անթէան բռնուեցաւ մի խիստ ու անիմանալի հիւանդու-

թեամբ: Նորա երազները զարհուրելի տեսիլքների փոխուեցան, որոնք սպառեցին նորա կենսական ոլժերը: Նորա երեսի վերայ հանգուեցան արշալորսի ճառագալթները, մնաց միայն սատափի թափանցիկ գաղտակուրը: Նորա ձեռները նիշարացան, դեղնեցան, աչքերը ճակատի տակ դէպի խորն ընկան և վարդակարմիր լոտոսը հետզհետէ դառնում, էր սպիտակ լոտոս, այնպէս սպիտակ, որպէս լինում է մեռելների դէմքը: Նկատեցին, որ բազէներն սկսել են պտոյտ գալ կիննալի տան վերայով, որն Եգիպտոսում համարվում էր մահուան նախագոյիտ, տեսիլքներն աւելի և աւելի սարսափելի էին դառնում: Կէսօրուայ ժամերին, երբ արեգակն իր սպիտակ ճառագալթներով ողողում էր երկիրը, և քաղաքն ընկլմվում էր լուսաւորութեան մէջ, Անթէալին թւում էր, թէ ինքն իր մօտ լսում է մի ինչոր աներեոյթ էակների արագ քայլերի ձայնը, իսկ օդի խորութեան մէջ տեսնում է դիակի չօր ու դեղնագոյն դէմքը, որը սւ աչքերով նայում էր նորա վերայ: Այդ աչքերն լամառութեամբ նայում էին նորա վերայ և կարծես կանչում էին նորան, որ նա գնալ դէպի այն կողմը, դէպի այն խաւարը, որը լի էր խորհրդաւորութեամբ ու սարսափներով: Այն ժամանակ Անթէան տենդով բռնուածի նման սկսում էր ամբողջ մարմնով դողալ: Նորա դէմքը գունատպում

էր, և ճակատի վերայ երեսում էին սառն քրտնքի կաթիլներ. և ընտանեկան օճաղի այդ վեհապանձ քրմուհին դառնում էր անօգնական ու ահաբեկուած մի մանուկ, որ փարուելով տմուսնու պարանոցով՝ գունաթափ շրթունքներով կրկնում էր. — Աղատէր ինձ, Կայոս, օգնէր ինձ:

Եւ Կայոսը պատրաստ էր արձակուել ամեն տեսակ երեսոյթի վերայ, որպիսիք Պերսեֆոնան կարող էր բաց թողնել իր ստորերկրեալ իշխանութիւնից, սակայն նա իզուր ակնապիշ նայում էր դէպի դատարկ ընդարձակութիւնը: Շրջակայքում, որպէս առհասարակ լինում է կէսօրին, տիրում էր դատարկութիւն: Արեգակի սպիտակ ցոլքը ողողում էր քաղաքն ու ծովը. արեգակը կարծես բորբոքվում էր և ընդհանուր լուսութեան մէջ լավում էր միայն տան վերայով պտոյտներ գործող բազէների և ուրուրների ձայնը:

Տեսիլքներն սկսեցին աւելի յաճախ կրկնուել և ապա ամեն օր: Նոքա հալածում էին նորան ինչպէս տանից դուրս, նոյնպէս և ատրիումում ու սենեակներում: Բժիշկների խորհրդով նա բերել տուեց եղիպտացի և արտբացի բեգուին նուագածուներ, որոնք ածում էին կաւեալ սրինգների վերայ և իրանց աղմկալից նուագածութեամբ պիտի խեղդէին աներեոյթ էակների աղմուկը: Բայց այդ էլ

իզուր անցաւ. Անթէան լուսմ էր նորան և ամենամեծ աղմուկի ժամանակ: Երբ արեգակն այնքան էր բարձրանում, որ մարդու ստուերը ուսերից ցած ընկած շորի նման փոփում էր ոտների տակ, այն ժամանակ տապից երերացող օդի մէջ երևում էր դիակի երեսը և ապակենման աչքերով նայելով Անթէալի վերայ՝ դանդաղ հեռանում էր և կարծես ուղում էր ասել. — Եկ իմ յետևից:

Մերթ Անթէալին այնպէս էր թւում, թէ դիակի շրթունքները կամաց շարժվում են և մերթ թւում էր, թէ նոցա միջից դուրս են թուչում ու ու զազիր զեռուններ և օդի միջով գալիս են դէպի իրան: Երբ նա մտածում էր տեսիլքների մասին, նորա աչքերը լցվում էին սարսափով ու դառնութեամբ. և վերջապէս, կեանքը նորա համար մի այնպիսի տանջանք դարձաւ, որ նա խնդրում էր կիննալին՝ կամ սպանել իրան կամ թոլլ տալ թոյն խմելու:

Կիննան իմանում էր, որ այդ ինքն անկարող էր անել: Նա այդ սրով Անթէալի համար կարող էր իր երակները կտրատել, բայց սպանել նորան՝ երբէք: Երբ նա ինքն իրան այդ թանկագին գլուխն երևակայում էր մեռած, փակուած կոպերով, լի սառն անդորրութեամբ և իր սրով ճղուած այդ կութքը՝ նա այն ժամանակ զգում էր, որ այդ մտա-

դրութիւնն 'իկատար ածելու համար նախ պէտք է ինքը խելագարուէր:

Մի յոյն բժիշկ յայտնեց նորան, որ դա Հեկատան է երեսում Անթէալին, իսկ այն աներեսոյթ է-ակները, որոնց աղմուկը զարհուրեցնում է հիւանդին, պատկանում են չարագուշակ աստուածուհու շքախմբին. նորա կարծիքով, Անթէալի համար փըրկութիւն չկար այլևս, որովհետև ով մի անգամ տեսել է Հեկատայի դէմքը՝ պիտի մեռնի:

Այն ժամանակ կիննան, որը քիչ առաջ ծաղրում էր Հեկատային, զոհ մատուց նորան: Բայց զոհը չ'օգնեց և հետեւեալ օրը կէսօրին այդ դաժան աչքերը դարձեալ նայում էին Անթէալի վերայ:

Փորձ փորձեցին քողարկել նորա գլուխը, բայց նա տեսնում էր դիակի դէմքը մինչև անգամ ամենահաստ ծածկոցների միջով: Երբ նա փակուած էր լինում մութ սենեակում, դէմքը նորա վերայ նայում էր պատերից՝ լուսաւորելով խաւարը իր աղօտ դիակային փալով:

Երեկոները հիւանդն իրան աւելի լաւ էր զգում: Այն ժամանակ նա ընկղմվում էր մի այնպիսի խոր քնի մէջ, որ կիննալին և Տիմոնին յաճախ թւում էր, թէ նա այլևս չի արթնանալ: Շուտով նա այնքան թուլացաւ, որ այլևս առանց կողմնակի օդութեան անկարող էր ման գալ. նորան կրում էին

պլատֆարակի վերայ:

Կիննալի առաջուայ վրդովմունքը վերադարձաւ
հարիւրապատիկ աւելի մեծ ոյժով և համակեց նո-
րա ամբողջ էութիւնը: Սրդ վրդովմունքի մէջ պա-
րունակվում էր և երկիւղ Անթէալի կեանքի հա-
մար, բայց կար միենոյն ժամանակ և սոսկալի նա-
խազգացումն՝ թէ նորա հիւանդութիւնը գաղտնի
կապ ունի այն բոլորի հետ, որոնց մասին Կիննան
իր առաջին անկեղծ խօսակցութեան ժամանակ ա-
սել էր Տիմոնին: Գուցէ նոյնն էր մտածում և ալե-
ղարդ իմաստունը, բայց Կիննան չէր ուզում և վա-
խենում էր նորան ալդ մասին հարց ու փորձ անել:
Այն ինչ, հիւանդը թուլանում էր որպէս մի ծաղիկ,
որի սրտում բոյն է դրել թոյնաւոր սարդը:

Կիննան թէև յոյս չունէր, բայց և այնպէս աշ-
խատում էր ազատել նորան: Առաջ նորան անապա-
տը տարաւ—Մէմֆիսի մօտերքը, բայց երբ բուր-
դերի հովանների տակ տիրող խաղաղութիւնն էլ
չփրկեց նորան սարսափելի երազներից, վերադարձաւ
Աղէքսանդրիա և շըշապատեց նորան կախարդնե-
րով, վհուկներով ու զանազան տեսակ անբարեխիղ
անցորդներով, որոնք հրաշագործ գեղերի միջոցաւ
հարստահարում էին մարդկալին դիւրահաւանու-
թիւնը: Բայց նա միջոցների մէջ ընտրութիւն չէր
անում և անխտիր հնազանդվում էր բոլորի խոր-

հուրդներին:

Այդ ժամանակները Կեսարիակից Աղէքսանդրիա
եկաւ Յովսէփ անունով մի նշանաւոր հրէալ բժիշկ,
որ Կուզայի որդին էր: Կիննան իսկոյն նորան կնոջ
մօտ հրաւիրեց, և յոյսն ըոպէապէս փայլեց նորա
յուսաբեկ սրտում: Յովսէփը, որ չէր հաւատում
հովմալեցոց ու յունաց աստուածներին, ատելու-
թեամբ հերքեց Նեկատալի մասին եղած ենթա-
դրութիւնը: Նա աւելի շուտ ընդունում էր, որ
հիւանդն այսահարուած է և յորդորում էր թողնել
Եգիպտոսը, ուր բացի գեերից, Նեղոսի գետաբերա-
նի ճահճալին գոլորշիները կարող էին նորա առող-
ջութեանը վնասել: Նա խորհուրդ էր տալիս տա-
նել նորան Երուսաղէմ, գուցէ և այն պատճառով,
որ ինքն էլ հրէալ էր և բացի այդ՝ Երուսաղէմը
թէ դեերին էր անմատչելի, և թէ նորա կիման
չոր էր և առողջարար:

Կիննան աւելի սիրայօժար կերպով հետևեց այդ
խորհրդին, մանաւանդ այն պատճառով, որ առա-
ջին՝ ուրիշ ելք չկար և երկրորդ՝ այն ժամանակ
Երուսաղէմը կառավարում էր նորան ծանօթ մի
դատաւոր, որի նախնիքը մի ժամանակ Կիննալի
տան հովանաւորեալներն են եղել:

Եւ իսկապէս էլ, հէնց որ նոքա Երուսաղէմ հա-
սան, դատաւորը՝ Պոնտացի Պիղատոսն ընդունեց

Նոցա գրկաբաց և նոցա բնակութեան համար տեղ որոշեց իր սեփական ամարանոցը, որ գտնվում էր քաղաքի պարիսպների մօտ: Բայց լոյսը, նորա լոյսը խորտակուեցաւ դեռ Երուսաղէմ չ'հասած, որով հետև դիմակի դէմքն երևում էր Անթէալին և նաև տախտակամածի վերայ: Քաղաք գալուց յետոյ, հեւանդը նոյնակիսի մահասարսուու մտատանջութեամբ սպասում էր կէսօրին, ինչպէս և մի ժամանակ Աղէքսանդրիայում:

Եւ այսպէս, նոցա օրերն անց էին կենում ահի, յուսահատութեան և մահու երկիւղի մէջ:

VI.

Զնայելով շատրուանի զովութեան, սրահի ստուերաշտութեան և գարնանալին կանուխ եղանակին՝ առըիումում անտանելի շոգ էր, որովհետեւ գարնան արեգակը սաստիկ տաքացնում էր մարմարիոնը, բայց տանից ոչ հեռու աճել էր մի յաղթանդամ պիտակենի, որը նշանաւոր տարածութեան վերայ փոել էր իր ստուերը: Այդտեղ հով էր և քամին ազատ շարժվում էր, որպէս բացօդեալ տեղում: Կիննան հրամայեց թարմ ու գոյնզգոյն ծաղիկներով զարդարած պատգարակը, որի վերայ դրուած էր Անթէան, տեղափոխել այնտեղ: Ապա նստելով մօտը՝ ձեռքը դրեց նորա ձնի նման սպիտակ ձեռ-

ների վերայ և հարցրեց:

— Քեզ ինչպէս ես զգում այստեղ, Անթէա:

— Աւ եմ զգում, պատասխանեց նա հազիւ լսելի ձայնով:

Եւ նա փակեց աչքերը՝ կարծես, խոր քնի մէջ ընկղմուելով: Տիրեց խորին լւութիւն. միայն քամին շշնկացնում էր պիտակենու տերևները, իսկ գետնի վերայ պատգարակի շուրջը, շողշողում էին տերևների արանքով թափանցող ճառագայթների ոսկէ բծիկները: Մորեխները ճռճռում էին քարերի արանքում:

Հիւանդը մի ըոպէից յետոյ աչքերը բաց արեց:

— Կայոս, աստց նա. Ճշմարիտ է, որ այս երկրում մի փիլիսոփայ է երևացել, որը բժշկում է հիւանդներին:

— Նոքա այստեղ այդպիսիներին մարգարէ են կոչում, պատասխանեց կիննան. Ես լսել եմ նորա մասին և ցանկանում էի նորան քեզ մօտ կանչել, բայց բանից դուրս եկաւ, որ նա կեղծ հրաշագործ է եղել: Բացի այդ, նա հայուել է այստեղի տաճարն ու այս երկրի օրէնքները, այդ պատճառով էլ դատաւորը նորան մահուան պատժի է դատապարտել և հէնց այսօր նա պէտք է խաչուի:

Անթէան գլուխը քաշ գցեց:

— Ժամանակ է քեզ բժշկելու, ասաց կիննան՝

տեսնելով նորա գէմքի վերալ արտայալտուող վիշտը:
— ժամանակը միշտ մահի խոնարհ ծառան է
և ոչ կեանքի. ծանր պատասխանեց նա:

Եւ դարձեալ տիրեց լուութիւն. չորս կողմը շարունակ շողշողում էին ոսկեալ բծիկները: Մորեխ-
ներն աւելի բարձր էին ճռճուռմ, և ժայռի ճեղ-
քուածներից դուրս սողացին քարերի վերալ փոք-
րիկ մողէսները՝ իրանց համար արեգակի տակ լար-
մար տեղ փնտրելու:

Կիննան ժամանակ առ ժամանակ նախում էր Ան-
թէալի վերայ, և նորա գլխում հազարերորդ ան-
գամ արծարծվում էր այն լուսահատական միտքը,
թէ Անթէալին ազատելու համար բոլոր միջոցները
վերջացել են, թէ այլևս լուսոյ մի փոքրիկ նշով
անգամ չկայ, և թէ շուտով այդ սիրելի էակը կը
դառնալ մի թեթև ու վաղանցուկ սառեր և մի
բուռն հող միայն:

Նա ալժմս աչքերը փակ, պառկած ծաղիկնե-
րով զարդարուած պատգարակի վերայ՝ մեռելի էր
նմանում:

— Ես էլ կգամ քո յետեից, ինքն իրան կը կնում
էր Կիննան:

Հեռուից ինչոր քայլերի ձայներ լսուեցան: Ան-
թէալի գէմքն իսկոյն գունաթափուեց, որպէս կա-
ւիճ, նորա կիսաբաց շրթունքները շնչում էին ա-

րագ. կուրծքն սկսեց աւելի շուտ-շուտ բարձր ու
ցած անել, և ապերջանիկ նահատակն այնպէս էր կար-
ծում, թէ դա աներեղով էտեկների շքախումբն է
մօտենում իրան, որը միշտ լայտնվում էր ասլուկեալ
աչքերով դիսկի երեալուց առաջ: Բայց Կիննան գդու-
եց նորա ձեռներն ու սկսեց հանդստացնել նորան:

— Անթէալ, դու մի՞ վախենար, այդ քայլերի
ձայնը ես էլ եմ լսում: Եւ մի բոպէից յետոյ աւելացրեց.

— Պոնտացի Պիղատոսն է գալիս մեղ մօտ:
Իսկապէս էլ, ճանապարհի շեղուելու տեղում
երկու ստրուկների ուղղեկցութեամբ երեսցաւ գա-
տաւորը. նա միջին տարիքով մի մարդ էր, կոլոր
ու մաքուր սափրած երեսով, լի եր զերքի վեհութեան
գիտակցութեամբ, բայց և տոգորուած ու յոգնած:
Ողջ յն քեզ, ազնուազտրմ Կիննա, եւ քեզ, դի-
ցանման Անթէալ, ասաց նա՝ մտնելով ծառի հովա-
նու տակ: Ահա ցուրտ գիշերուան լաջորդեց հրա-
բուքոք օրը: Թող նա նալսատաւոր լինի ձեղ երկու-
սիդ համար, և թող Անթէալի առողջութիւնը ծաղ-
կի այս ծաղիկների նման, որոնք զարդարում են
նորա պատգամակը:

— Ողջ յն և խաղաղութիւն քեզ, պատասխանեց
Կիննան: Պատաւորը՝ նստելով ժայռից պոկուած քա-
րի բեկորի վերայ՝ մտիկ տուեց Անթէալին և յօնքերը
կիտելով ասաց.

— Միայնակութիւնը մարդու մէջ առաջ է բերում
թախիծ ու հիւանդութիւն, իսկ ամբոխի մէջ չի կա-
րող երկիւղ տեղի ունենալ, ուստի ես ձեզ մի խոր-
հուրդ եմ տալիս: Դժբախտաբար սա ոչ Անտիոքն
է և ոչ էլ Կեսարիան, և այստեղ ոչ խաղեր կան և
ոչ էլ արշաւահանդէսներ, իսկ եթէ մի կրկէս հիմ-
նուեր, հենց միւս օրն այս յափշամոլները կը խոր-
տակ էին նորան: Այստեղ լավում է միայն օրէնք բառը
և այս պատճառով էլ ամեն բան խանգարվում է
օրէնքով: Ես առաւել բարւոք կը համարէի լինել
Սկիւթիալում, քան այստեղ:

— Դու ի՞նչ բանի մասին ես ուզում խօսել, Պի-
ղատոս:

— Ճշմարիտ, որ ես շեղուեցայ թեմալից: Բայց
դորա պատճառը հոգսերն են: Ես ասի, որ ամբոխի
մէջ չի կարող երկիւղ տեղի ունենալ: Ահա դուք
այսօր կարողէք հանդիսատես լինել մի տեսարանի:
Երուսաղէմում պէտքէ բաւականանալ միայն նորա-
նով, ինչոր կը պատահի. նախ և առաջ անհրաժեշտ
է, որ Անթէան կէսօրին լինի ամբոխի մէջ: Այսօր
խաչի վերայ կըմեռնին երեք մարդիկ: Դա դարձեալ
ոչնչից լաւ է: Եւ միեւնոյն ժամանակ Զատկի տո-
ների պատճառով երկրի այլ և այլ կողմերից այստեղ
են հաւաքուել շատ բազմազան խմբեր: Դուք կա-
րողէք մի լաւ դիտել այս ժողովուրդը: Ես կը

հրամայեմ, որ խաչերից մօտիկ ամենալաւ տեղը
ձեզ տան և լոյս ունիմ, որ դատապարտեալները կը
մեռնեն աներկիւղ: Նորանից մէկը տարօրինակ մարդ-
է, իրան Աստուծու Որդի է կոչում, հեզ է որպէս
աղաւնի և իսկն ասած, նա ոչ մի յանցանք չէ
գործել, որով արժանի լինէր մահուան:

— Եւ դու նորան խաչից դատապարտեցիր:

— Ես ուզեցի գլուխս աղմուկից ազատել և միե-
նոյն ժամանակ ձեռք չ'տալ այն վարի մեղունե-
րի բնին, որոնք անգաղար բզբղում են տաճարի շուր-
ջու: Նոքա առանց այն էլ ինձ վերայ գանգատներ ու
բողոքներ են ուղարկել Հոռվմ: Բայց այստեղ խօս-
քը հռովմի քաղաքացու մասին չէ:

— Դորանով այդ մարդու տանջանքները չեն
մեղմանայ:

Դատաւորը չ'պատասխանեց և մի ըոպէից լե-
տոյ դարձեալ սկսեց խօսել, կարծես, ինքն իրան:

— Կայ մի բան, որը ես չեմ կարող տանել, դա
ծալրահեղութիւնն է: Ով ինձ մօտ այդ բառը կ'ար-
տասանէ, նա մի ամբողջ օրով ինձ ուրախութիւնից
կ'զրկէ: Պահպաննել չափաւորութիւն, — ահա, իմ
կարծիքով, ինչ է պահանջում բանականութիւնը,
իսկ ամբողջ աշխարհում չկայ մի այլ անկիւն, ուր
այդ սկզբունքին աւելի քիչ հետևէին, քան այս-
տեղ: Խնչպէս այդ ամենն ինձ տանջում է, ինչպէս

տանջում է։ Ոչ մի բանի մէջ անդորրութիւն, ոչ մի բանի մէջ հաւասարակշռութիւն չկայ . . . Ոչ մարդկանց և ոչ էլ բնութեան մէջ . . . Հիմա, օրինակ, գարուն է. գիշերները ցուրտ են, իսկ ցերեկով այնպիսի շոգ է լինում, որ քարերի վերայով գնալն անգամ դժուարանում է։ Դեռ կէսօրը հեռու է. բայց նայեց՝ք, թէ ինչ է կատարվում։ Ինչ վերաբերում է մարդկանց՝ այդ մասին աւելի լաւ է լրել։ Ես այստեղ եմ, որովհետև ստիպուած եմ այստեղ լինելու։ Բայց դա չէ հարցը. ես դարձեալ շեղուեցայ թեմայից։ Գնաց՝ք խաչելութիւնը տեսնելու։ Ես հաւատացած եմ, որ այն նազովեցին աներկիւղ կ'մեռնի։ Ես հրամայեցի գանակոծել նորան, կարծելով, որ դորանով ազատած կլինիմ մահից։ Ես խստասիրտ չեմ. երբ նորան ծեծում էին, նա համբերում էր գառան պէս և օրհնում էր մարդկանց։ Երբ նա արիւնաքամ էր լինում, աչքերը դէպի երկինք բալ ձրացրեց և աղօթում էր։ Դա մի սքանչելի մարդ է, որի նմանը ես կեանքումս առաջին անգամն եմ տեսնում, կինս նորա պատճառով ինձ ոչ մի րոպէ դադար չէր տալիս։ „Մի թողնի, որ անմեղը մեռնի“, ահա առաւաօտեանից այս էր շշնչում նա իմ ականջին։ Ես ուզում էի ազատել նորան. երկու անգամ դուրս եկայ և դիմեցի եկեղեցու այդ յամառու խստապարանոց պաշտօնեաներին, այդ գարշե-

լի խուժանին։ Նոքա գլուխները լետ ձգած և բերանները մինչև ականջները բացած՝ միաբերան պատասխանեցին ինձ, ասելով. „Ե խաչ հան“։ — Եւ դու զիցեցի՞ր, հարցրեց կիննան
— Որովհետև քաղաքում կարող էին անկարգութիւններ ծագել, իսկ ես նորա համար եմ ալստեղ որ խաղաղութիւնն պահպանեմ. ես պէտք է իմ պարտականութիւնն կատարեմ։ Ես ծայրահեղութիւններ չեմ սիրում և միևնույն ժամանակ սաստիկ լոգնած եմ, բայց եթէ մի որ և է գործի ձեռնամուխ եղայ, այն ժամանակ երբէք չեմ տատանուի ընդհանուրի բարօրութեան համար մէկի կեանքը զոհելու, մանաւանդ մի անյալտ մարդու կեանքը, որին ոչ ոք չի պաշտպանի։ Նորա համար դեռ աւելի վատ է, որ հոռվմայեցի չէ։

— Բայց չէ որ արեգակը միայն Հոռվմի վերայ չի ծագում, մտմտաց ինքն իրան Անթէան։

— Դիցանման Անթէա, հակաճառեց դատաւորը. — Ես կարող էի քեզ պատասխանել, որ ամբողջ երկրագնդի վերայ նա լոյս է տալիս միմեայն հոռվմէական իշխանութեան. հետեապէս և նորա բարօրութեան համար պէտքէ զոհել ամեն բան, իսկ անկարգութիւնները նսեմացնում են մեր վարկը։ Բայց նախ և առաջ ինդրում, աղաչում եմ քեզ՝ մի պահանջիր ինձանից, որ ես փոխեմ մահավճիռը։ Կիննան նոյն-

պէս կասի քեզ, որ դա անկարելի է, և երբ մի անգամ արդէն կաշդացուած է դատավճիռը, նորան գուցէ միայն ինքը կայսրը կարողանալ փոխել, ես ցանկանամ էլ, անկարող եմ, Այդպէս չէ, Կայս:

— Այս, այդպէս է:

Բայց այդ խօսքերն, ըստ երեսովին, անհաճոյ էին Անթէալին, որովհետեւ նա այդ ասելով կարելի է, իր մասին էր մտածում:

— Ուրեմն կարելի է տանջուել և անմեղ տեղը մեռնել:

— Ոչ ոք առանց մեղքի չփ լինում, պատասխանեց Պիլատոսը. — Այդ նազովրեցին ոչ մի լանցանք չէ գործել, հետևապէս և ես որպէս դատաւոր ձեռներս լուացի: Բայց իբրև մարդ՝ ես դատապարտում եմ նորա վարդապետութիւնը: Ես դիտմամբ բաւական երկար խօսեցալ հետը, ցանկանալով փորձել նորան և համոզուեցալ, որ նա քարոզում է չ'լսուած բաներ: Դժունը բան է . . . Աշխարհը խելքով ու բանականութեամբ պիտի կանգն մնալ: Ա՞վ կարող է հերքել բարեգործութեան անհրաժեշտութիւնը. Հաւանօրէն, ոչ ես: Բայց սինչեւ անգամ ստովիկանները, որ ուսուցանում են միտին մնալդյողդ պարզութեամբ տանել ամեն տեսակ դժուաբութիւններ, երբէք չեն պահանջում, որ մենք հրաժարուենք մեր ունեցածներից՝ սկսած փարթամ ճաշերից մին-

չե մեր կարողութիւնը: Այսան սկսում է համար Սսահ, Կիննա, դու մի խելօք մարդ ես, դու ինչ կը կարծէիր իմ մասին, եթէ ես յանկարծ վեր առնէի և այս տունը, որի սէջ գուք ապրում էք, տալի ահա այս ցնցոտիների սէջ վաթաթուած սրիկաներին, որոնք ընկած Յոպպէի դռնելի մօտ, տաքանում են արեգակի տակ: Խակ նա խակ և խակ այդպիսի բաներ է պահանջում: Միենոյն ժամանակ քարոզում է, թէ պէտքէ բոլորովին հաւասար սիրել. Հրէաներին այնպէս՝ ինչպէս հռովմալեցիներին, հռովմալեցիներին այնպէս՝ ինչպէս եգիպտացիներին, եգիպտացիներին այնպէս՝ ինչպէս եթովպացիներին և այլն: Խոստովանում եմ, ինձանից այդքանն էլ բաւական էր: Այն ըռպէին, երբ խօսքը նորա կեանքի մասին է լինում, նա իրան այնպէս է ցոյց տալիս, որ իբր խօսքը բոլորովին մի ալլ մարդու է վերաբերում. խրատում է և աղօթում: Ես պարտաւոր չեմ վրկելու մի այնպիսի մարդու կեանքը, որն ինքն այդ մասին ամենալին չփ հոգում: Ով որ մի բանի սէջ չափ ու սահման չփ կարող պահպանել, նուան չփ կարելի խոհեմ անուանել: Միենոյն ժամանակ նա իրան Աստուծոյ Որդի է կոչում և դորանով խաղդում է այն հիմունքները, որոնց վերալ հաստատուած է աշխարհը. և դորանով վնասում է մարդկանց: Թող ինքն իր մեջ ինչ ուզում է մտածէ, միայն թէ՝ եղածը չը

խափանէ։ Որպէս մարդ ես բողոքում եմ նորա վարդապետութեան դէմ։ Եթէ ես, դիցուք, չեմ հաւատում աստուածներին՝ դա իմ գործն է։ Սակայն ես խոստովանում եմ կրօնի անհրաժեշտութիւնը և հրապարակաւ լայտնում եմ այդ, որովհետեւ կարծում եմ, որ կրօնը ժողովրդի համար սանձի գեր է կատարում։ Դիանքը լծուած պիտի լինին։ Բայց մահը այդ նազովրեցուն սոսկալի չպիտի թուայ, որովհետեւ նա պնդում է, թէ ինքը յարութիւն կառնէ։ Կիննան և Անթէան զարմացած միմեանց երեսի մտիկ տուին։

—Ե՞րբ յարութիւն կառնէ։

—Ոչ աւել և ոչ էլ պակաս, ուղիղ երեք օրից յետոյ. գոնէ ալդպէս են ասում նորա աշակերտները։ Բայց ասենք թէ միևնոյնն է, որովհետեւ մահը մարդուն ազատում է իր տուած խոստումները կատարելուց։ Իսկ եթէ յարութիւն էլ չ'առնէ, նա դարձեալ կորուստ չի ունենայ, որովհետեւ համաձայն նորա վարդապետութեան ճշմարիտ երջանկութիւնը յաւետենական կեանքի հետ միասին սկսվում է միայն մեռնելուց յետոյ։ Նորա Հագէսում աւելի լոյսէ, քան մեր աշխարհում, և որքան մէկն աւելի է տանջվում այստեղ, նոյնքան աւելի հեշտութեամբ կ'մտնի այնտեղ. պէտք է միայն սիրել, սիրել և սիրել։

—Տարօրինակ վարդապետութիւն է, ասաց Ան-

թէան։

—Իսկ նորանք գոռում էին՝ „ի խան հան“ հարցրեց կիննան։

—Ես մինչև անգամ չեմ էլ զարմանում, որովհետեւ այս ժողովրդի հոգին ատելութիւնն է, և ով, եթէ ոչ ատելութիւնը միայն կարող է գոռալ, որ սէրը խաչուի։

Անթէան ճակատը սրբեց նիհարած ձեռքով։

—Եւ նա հաւատացած է, որ մեռնելուց յետոյ կարող է ապրել և երջանէկ լինել։

—Այդ պատճառով էլ նորան սարսափելի չեն ոչ խաչը և ոչ էլ մահը։

—Խնչպէս այդ լաւ կը լինէր, Կայոս . . .

Մի բոպէից յետոյ նա դարձեալ հարցրեց։

—Այդ բանի մասին նա որտեղից է իմանում։

Դասաւորը հեգնօրէն ասաց։

—Նա ասում է, թէ ինքն սլդ իմանում է նորանից, որը բոլոր մարդկանց Հայրն է կոչվում և որը հրէաների համար նոյն է, ինչ որ մեզ համար Դապիտերը, սակայն այն զանազանութեամբ միայն, որ նազովրեցու կարծիքով նա մի է և ողորմած։

—Բայց ճշմարիտ, այդ էնչպէս լաւ կը լինէր, Կայոս, կը կնում էր հիւանդը։

Կիննան բերանը բաց արեց և կտրծես ուզում էր պատասխանել, բայց լոեց և խօսակցութիւնը

դադարեց։ Պիղատոսն, ըստ երևոլթին, շարունակում էր մտածել նազովրեցու օտարոտի վարդապետութեան մասին, որովհետև մերթ ընդ մերթ գըլուխ շարժում էր և բոլէ առ բոլէ ուսերը վերև քաշում։ Վերջապէս նա վեր կացաւ և սկսեց հրաժեշտի ողջոյն տալ։

Յանկարծ Անթէան ասաց.

— Կայոս, գնանք տեսնենք այդ նազովրեցուն։

— Նտապեցէք, ասաց Պիղատոսը հեռանալով, թափորը շուտով կ'սկսուի։

VII.

Օրը, որ առաւտեան պարզ էր և հրատապ, կէս օրուայ դէմ սկսեց խոժոռագունել։ Հիւսիս-արեւելքից վերայ հասան մութ կամ պղնձագոյն ամպերը, որոնք թէե այնքան էլ մեծ չէին, բայց փոթորկաբեր էին։ Չնայելով որ այդ ամպը պայմանական թխպերի մէջ տեղ տեղ դեռ երեսում էր վառ կապուտակութիւն, սակայն դժուար չէր նախագուշակել, որ նոքա շնուրով կը միանան ու կը ծածկեն ամբողջ երկնակամարը։ Իսկ արեգակը ողողում էր նոցա իր ոսկեայ ճառագալթների հրով ու լուսով. քաղաքի ու հարեւան բլուրների վերայ դեռ երեսում էր պարզ երկնակամարի սի լայն շերտ, և ներքում ոչ մի քամի չկար։ Բարձր սարահարթի վերայ, որ Գողգոթա էր կոչ-

վում, արդէն այստեղ և այնտեղ կանգնած էին մարդկանց փոքրիկ խմբակներ, որոնք առաջ էին անցել թափորից, որը դուրս պիտի գար քաղաքից։ Սրգակը լուսաւորում էր լայնատարած, քարքարոտ, անպտուղ, ամայի և տիուր վայրերը։ Նոցա միապաղպաղ սատափի գոյնն ընդհատվում էր խորշերի և խրամատների սեադէմ ցանցով, որն այնքան աւելի ու էր, որքան աւելի էր լուսաւորուած սարահարթը։ Հեռուում երեսում էին աւելի բարձր լեռներ՝ նոյնպէս ամայի ու քողարկուած հեռաւորութեան կապտագոյն շղարշով։

‘Ներքեսում՝ քաղաքի պարսպի և Գողգոթալի միջև՝ տարածվում էր սի հարթութիւն, ուր տեղ-տեղ երեսում էին սուր սուր ժայռեր, բայց այստեղ այնքան ամայի չէր։ Այնտեղ՝ խորշերում, ուր հաւաքուել էր սի փոքր պտղաբեր հող՝ դուրս էին եկել նոսր ու ոչորմելի ճղներով արմաւենիներ։ Տեղ-տեղ բաձրանում էին շինութիւնները տափարակ կտուրներով, որոնք ծիծեռնակի բնի նման, կարծես, ամրացրած լինէին քարեայ պատերին։ Կամ հեռուն փալում էին արեգակի տակ և երեսում էին սպիտակ գերեզմաններ։ Հիմա, շնորհիւ այն հանգամանքի, որ տօները մօտեցել էին և գաւառներից մեծ քանակութեամբ ժողովուրդ էր հաւաքուել քաղաք, պատերի մօտ կանգնեցը էին բազմաթիւ վրաններ,

որոնք նմանում էին զինւորական բանակի և լիքն
էին մարդկանցով ու ուղտերով:

Արեգակն աւելի և աւելի էր բարձրա-
նում դէպի երկնակամարի այն մասը, որը մինչև
ալժմ գեռ չէր ծածկուած ամպերով: Մօտենում էր
ժամը, երբ սովորաբար այդ բարձրութիւնների վե-
րայ թագաւորում էր խորին լուսթիւն, որովհետև
բոլոր կենդանի արարածներն ապաստան էին
գտնում պատերի տակ կամ քարանձաւներում: Մին-
չև անգամ ներկայ ըոպէին, չնայելով արտասովոր
կենդանութեան, մի ինչ որ թափիծ թագնուած էր
այդ շրջակալքում, ուր կուրացուցիչ լուսոյ փայլն
ընկնում էր ոչ թէ խոտերի, այլ թուխ մոխրագոյն
քարերի բեկորների վերայ: Պարսպի կողմից լսուող
հեռաւոր ձայների դղրդիւնը, որ նմանում էր ծովի
մըրկածուփ ալիքներին՝ գնալով կարծես անհետա-
նում, կորչում էր ընդհանուր լուսթեան մէջ:

Մարդկանց հեռաւոր խմբակները, որոնք վաղ
առաւօտից սպասում էին Գողգոթայի գագաթին,
երեսները շուռ տուին դէպի քաղաքը, որտեղից
հէնց այդ րոպէին պիտի շարժուէր թափորը: Ահա
երեցաւ և Անթէալի պատգարակը, որի առաջից
գնում էին դատաւորից կարգուած մի քանի զին-
ւորներ, որոնք ընդհանուր խառնակութեան մէջ ճա-
նապարհ պիտի բաց անէին, իսկ ներկայ դէպում

և պահպանէին նոցա օտարատեաց ու մոլեռանդ ամ-
բոխի վիրաւորանքներից: Պատգարակի մօտով քայլում
էր կիննան հարիւրապետ Ռուփիլի ուղղեկցութեամբ:

Անթէան ըստ երկոյթին աւելի անվրդով էր և
աւելի քիչ ահաբեկուած՝ չնայելով որ կէսօրը մօ-
տենում էր, և նորա հետ միասին սոսկալի տան-
ջանքների սարսափը, որոնք խամրեցրել էին նորա
կեանքի դալարը: Այն, ինչ որ դատաւորն ասել էր
երիտասարդ Նազովրեցու մասին, համակել էր նորա
միտքը և նորա ուշադրութիւնն իր սեփական տան-
ջանքներից գրաւել դէպի նա: Դորանում միայն մի
բան տարօրինակ էր թւում Անթէալին, որը նա չէր
կարողանում հասկանալ: Այն ժամանակուայ աշխար-
հը շատ մարդիկ էր տեսել, որոնք նոյնքան խա-
ղաղ էին մեռնում, սրքան խաղաղ է հանգվում
յուղարկաւորութեան սգի խարոյկը, երբ նորա մէջ
վերջանում է փայտի պաշարը: Բայց այդ խաղա-
ղութիւնը բղխում էր արիութիւնից կամ այն փի-
լիսովիալական հալեացքից, թէ լոյսին անշուշտ պիտի
յաջորդէ խաւարը, իսկ կեանքին՝ մի ինչ որ անկա-
յուն, խաւարալին և անորոշ դրութիւն: Դեռ ոչ ոք
մինչև ալժմ չէ օրհնել մահը, գեռ ոչ ոք չէ մե-
ռել այն անդրդուելի հաւատով, թէ միայն խարոյ-
կից կամ դագաղից լետոյ է սկսվում ճշմարիտ կեան-
քը և այն երանաւետ ու անսահման երջանկութիւ-

նը, որպիսին կարող է տալ միայն հզօրագոյն և յաւլիտենական էակը:

Նա, որին պատրաստվում էին խաչել, քարոզում էր այդ, որպէս աներկբայելի ճշմարտութիւն: Անթէալին այդ վարդապետութիւնը ոչ միայն չ'այլայլեցրեց, այլ և նորան թուաց լոյսի և զուարթութեան միակ աղբիւրը: Նա իմանում էր, որ ինքը պիտի մեռնի և այդ անսահման թախիծը պաշարում էր նորան, անջատուել կիննալից, անջատուել հօրից, անջատուել լոյսից, սիրուց, դատարկութիւնից, ցըրտից, ոչնչութիւնից, խաւարից: Հետեապէս, որքան քաղցր եղած լինէր նորա համար կեանքը, նոյնքան զօրեղ կը լինէր և թախիծը: Եթէ մահը կարողանար մի որ և է բանի համար պէտք գալ, եթէ կարելի լինէր իր հետ վերցնել գէթ սիրոյ լիշողութիւնը, գէթ երջանկութեան լիշատակը, — նա այն ժամանակ աւելի հեշտութեամբ կը հաշտուեր մահուան հետ:

Եւ ահա, մահից ոչինչ չ'սպասելով՝ նա յանկարծ լսեց, որ մահը նորան կարող է տալ ամեն բան: Եւ ով է այդ քարոզողը, մի ինչ որ տարօրինակ մարդ, ուսուցիչ, մարդարէ, փիլիսոփայ, որը մարդ կանց սէր կտակեց՝ իբրև ամենավսեմ բարեգործութիւն, որը օրհնում էր նոր ճշմարտութիւն միայն կարող է մարդկային մեղսատանջ հոգին ազատել խաւարի կապանքներից: Եւ ահա, նոր ճշմարտութիւնը: Նա լաղթեց մահուան և ուրեմն փրկութիւն բերեց: Անթէան իր բոլոր էութեամբ այնպէս էր խորասու-

մար էր նա այդպէս սովորեցնում, եթէ խաչն էր նորա միակ վարձատրութիւնը: Ուրիշները ծարաւի էին իշխանութեան, իսկ նա այդ չուզեց, երրորդները կայքի, բայց նա ազքատ մնաց. չորրորդները պալատների, խնձորքների, ճոխութեան, ծիրանի գգեստների, սատափով ու փղոսկրով զարդարած կառքերի, իսկ նա ապրեց որպէս հովիտ: Նա միևնույն ժամանակ յորդորում էր սէշ, կարեկցութիւն, ազքատութիւն: Նշանակում է՝ նա չէր կարող չար լինել և չար դիտաւորութեամբ խարել մարդկանց: Եթէ նա ճշմարիտն էր ասում, ապա այդ դէպքում թող օրհնուի մահը, որը վերջ է գնում մեր աշխարհային վշտերին, որը վատթար կեանքը փոխում է լաւի, որը լոյս է խաւարով աչքերի համար և որը թեեր է, որոնցով սլանում են դէպի լաւիտենական ուբախութիւնը: Հիմա Անթէան հասկանում էր, թէ ինչ նշանակում յարութեան ուխտը:

Թշուառ հիւանդն իր բոլոր մտքով և բոլոր սրտով հպուեցաւ այդ վարդապետութեան. նա մտաբերում էր և հօր խօսքերը, որ բազմիցս կրկնել էր, թէ մի բոլորովին նոր ճշմարտութիւն միայն կարող է մարդկային մեղսատանջ հոգին ազատել խաւարի կապանքներից: Եւ ահա, նոր ճշմարտութիւնը: Նա լաղթեց մահուան և ուրեմն փրկութիւն բերեց: Անթէան իր բոլոր էութեամբ այնպէս էր խորասու-

զուել այդ մտքերի մէջ, որ կիննան շատ և շատ օրերից յետով հիմա առաջին անգամն էր կէսօրուայ մօտ նորան արդպէս խաղաղ ու անվրդով տեսնում:

Վերջապէս, երթը քաղաքից շարժուեց դէպի Գողգոթա: Եւ այն բարձրութիւնից, ուր կանգնած էր Անթէան, շատ պարզ երեսում էր ամեն բան: Ամբոխի բազմութիւնն ստուար էր. սակայն, կարծես, նա կորչում էր քարքարոտ տարածութեան վերար: Քաղաքի բաց դռներից դուրս խուժեց մեծ բազմութիւն. ճանապարհին նոցա միացան և նոքա, որոնք սպասում էին պարսպից գուրս, սոքա սկիզբն ընթանում էին խիտ շղթայաձեւ և ապա վարարուող գետի նման հետպհետէ ցրվում լայնանում էին: Երկու կողմով վազվզում էին երեխաների խմբերը: Երթըն սալիտակ վերաբերուների, կանանց ծիրանագոյն ու կապոյտ թաշկինակների ծածանուելուց փոփոխվում և խալատաբղէտ գոյն էր ստանում: Մէջ տեղում փայլում էին հոռվմէական զինւորների սաղավաշտներն ու տէգերը, որոնց վերայ արեգակը, կարծես, սփռել էր իր թոռուցիկ ճառագալիթները: Խառն ՚ի խուռն ձախների աղմուկը լսվում էր հեռուից, որ գնալով աւելի և աւելի էր լսելի դառնում:

Վերջապէս, նոքա բոլորովին մօտեցան, և առաջին կարգերն սկսեցին մագլցել դէպի սարը: Ամբոխըն շտապում էր յարմար ու մօտիկ տեղ բռնելու

և ըստ կարելոյն պատիժը պարզ տեսնելու. այս պատճառով էլ դատապարտեալներին տանող զինւորներն աւելի յետ էին մնացել: Առաջին բարձրացողները մանուկներն էին, առաւելապէս տղաները՝ կիսամերկ, սրունքներին ցնցոտիներ փաթաթած, խուզած գլուխներով, ուր միայն երկու փունջ մազեր էին թողնուած և թուխ, համարեա աղաւնու բիբերով. սոքա ճչալով ու վայրագ աղմկով պոկում էին ժայռից թափթափուած մանր քարերը և պատրաստում էին նոցա խաչուղների վերայ արձակելու: Խսկոյն նոցա յետեկից ամբողջ բարձրութիւնը ծածկուեցաւ խաժամուժ ամբոխով: Դէմքերը, շարժողութիւնից ու տեսարանը դիտելու անհամբերութիւնից, մեծ մասամբ բորբոքուած էին, և ոչ մինի վերայ կարեկցութեան նշոյլ չէր նշմարվում: Զայների ճիշն ու աղաղակը, իւրաքանչիւրի բերանից դուրս թռչող բառերի անհաշիւ բազմութիւնը և շարժողութիւնների ուժգնութիւնը զարմացնում էին Անթէային: Թէպէտ նա Աղէքսանդրիայում ընտելացել էր յունական շատախօսութեան, բայց այստեղ մարդիկ այնպէս էին խօսում չերար հետ, որ կարծես պատրաստվում էին միմեանց վերայ արձակուել. այնպէս էին ձախ տալիս իրար, որ կասես վտանքի մէջ լինէին, կամ խօսքն իրանց ազատութեան մասին լինէր և վիճում էին այնպէս, որ կարծես մէկն ու

զում էր նոցա կաշիները մաշկել:

Ցինտուրին Ռուփիլը մօտենալով պատգարակին՝
սառնասրութեամբ և պաշտօնական լեզուով բացա-
տրութիւններ էր տալիս. այն ինչ ժողովուրդն ան-
ընդհատ աւելանում և աւելանում էր, իսկ հրահրոցը
րոպէ առ բովէ սաստկանում: Ամբոխի մէջ երեսում
էին և Երսւսաղէմի հարուստները՝ փաթաթուած
գոյնզգոյն վերարկուների մէջ. սոքա առ հասարակ
իրանց հեռու էին պահում արուարձանների մեր-
կանդամներից: Ահագին քանակութեամբ աճապա-
րեցին և գիւղացիները, որոնք տօների պատճառով
իրանց ընաանիքներով եկել էին Երսւսաղէմ. եկան
և հողագործերը տոպրակներն ուսերին. հովիւ-
ները բարեհրդի ու գարմացած դէմքերով և այծի
մոշթիներով ծածկուած: Կանանց խումբը գնում էր
տղամարդկանց հետ, բայց որովհետև հարուստ կա-
նայք տնելից դուրս գալ չէին ախուժում, ուստի
դոքա ուղղակի հասարակ գասակարդի և գիւղացի
կանայք էին, կամ սկճնուած և ներկած մազեցով,
յօնքերով ու եղունկներով պառնիկներ, որոնցից բա-
ւական հեռու տարածվում էր նարդոսի անուշ հոտ:;
Նոքա գրամներից պատրաստած ահագին օղեր ու
մանեակներ ունէին:

Վերջապէս վերայ հասաւ և ծերակոյտ: նո-
քա մէջ տեղը բռնած էր Քանանը*), որը ուբուրի

գիշատիչ դէմքով ու կարմիր կոպերով մի ծերունի
էր. իսկ նորա մօտ առ մօտ կանգնած էր երկեղ-
ջիւրանի գլխարկով և կրծքի վերայ ոսկեզօծ տախ-
տակով Կայիափան: Սոցա յետեկից գնում էի նալլե-
ալ փարփացիներ. օրինակ, ոտները ւաշ աստղիներ,
որոնք գնալիս գիտմամբ գարշապարները դպցնում
էին ճանապարհի խորդ ու բորդ տեղերին. կային
փարփացիներ ալիւնաշաղախ ճակատները վ, որոնք
նորնպէս դիտմամբ գլուխները խփում էին պատերին.
կային և կուզառորուած փարփացիներ, որոնք կար-
ծես պատրաստ էին ամբողջ քաղաքի մեղքերի ծան-
րութիւնը բառնալ իրանց ուսերի վերայ: Դաժան
վեհութիւնը և սառն յամառութիւնը գանազանում
էին այդ մարդկանց ուզորական մահկանացուների
աղմկալից խմբերից:

Կիննան տիրապետող գասակարդին պատկանող
մարդու յատուկ ատելութեամբ և տրհամարդական դէմ-
քով դիտում էր այդ ժողովուրդը. Անթէան նայում
էր ահու գողով և զարմացած: Աղեքսանդրիալում
շատ հրէաներ էին ապրում, բայց նոքա կիսով չափ
հէպեներ էին. այստեղ նա առաջին անգամն էր նո-
ցա տեսնում այնպէս, ինչպէս նոցա նկարագրել էր
դատաւորը, և որպէս նոքա ներկայանում էին ի-
րանց սեփական բնի մէջ. նորա մատաղ ու քնքոյլ
երեսը, որի վերայ մահն արդէն դրոշմել էր իր կնիքը

*) Բառ աւետարանի – Անհան:

և նորա ստուերի նման մարմինը գրաւել էր իր վերալ ընդհանուրի ուշադրութիւնը։ Պատգարակը շրջապատողները, որքան այդ թոյլ էին տալիս պահապան զինւորները, անպատճառ հետաքրքրութեամբ նայում էին նորան։ Սակայն այստեղ ատելութիւնն ու արհամարանքը դէպի օտարերկրացիներըն այնքան զօրեղ էր, որ ոչ ոքի աչքերում չէր նշմարվում կարեկցութեան նշոյլ, այլ առաւել նոցա աչքերում փալլում էր մի վայրագ ուրախութիւն՝ թէ զոհն այլ ևս անկարող է խուսափիլ մահից։ Անթէան միայն հիմա էր հասկանում, թէ ինչու այդ մարդիկը „խաչիր դորան, խաչիր“ էին գոռում այն մարդարէի համար, որը նոցա սէր էր քարոզում։

Եւ յանկարծ ալդ նազովրեցին նորան մօտ, շատ մօտ թուաց, մինչև անգամ սիրելի։ Նա պէտք է մեռնէր, ինքը նոյնպէս։ Դատավճիռը կարդալուց յետոյ նորան այլևս ոչինչ չէր կարող ազատել մահից։ Իրան մահուան վճիռն էլ արդէն արտասանուած էր, և Անթէալին թուում էր, թէ իրանց միացնում է վշտի և մահուան եղբայրութիւնը . . . Միայն նա գնում էր խաչուելու հաստատ հաւատով՝ թէ մահուանից յետոյ իր համար նոր կեանքի գարուն պիտի բացուի, իսկ Անթէան մինչև այժմս չունէր այդ հաւատը և եկել էր ձեռք բերելու նորան՝ նորա վերայ նայելուց։

Այդ ժամանակ հեռուից լսվում էին խուլ ձայներ, սուլոցներ և աղաղակներ, ապա ամեն ինչ լռեց։ Լսուեց զրահների շառաչիւնը և զինւորների ծանր քայլը. խուժանը տարուբերուեց ու յետ յետ քաշուեց, և դատապարտեալներին տանող զինւորներն անցան պատգարակի մօտով։ Առաջից, յետեկից և երկու կողմով գնում էին զինւորները. մէջ տեղում երևում էին երեք խաչափայտեր միայն, որոնք, կարծես, երանք էին շարժվում, որովհետեւ նոցա կրող մարդիկը սաստիկ կուացած էին ծանրութեան տակ։ Հեշտութեամբ կարելի էր նկատել, որ նոցա մէջ նազովրեցին չկար, որովհետեւ երկուսի դէմքերն անամօթ և աւազակային էին, իսկ ելրորդը մի հասարակ գիւղացի երիտասարդ էր, որին, շատ կարելի է, զինւորներն էին ստիպել փոխարինել նազովրեցուն։ Խաչերի յետքեկից երկու զինւորների ուղղեկցութեամբ գնում էր նազովրեցին։ Նա գնում էր ուսերին ձգած ծիրանի պատմուանը, և գլխին դրած փշեալ պսակը, որի տակից երեւում էին արեան կայլակներ։ Մի քանի կախիլներ ծանր հոսում էին երեսի վերայով, միւսները տեղն ու տեղը չորանում էին պսակի տակ մասրի պտուղների կամ բուստի յուլունքների նման։ Նա գունաթափ էր, շարժվում էր դանդաղ, երերուն ու թուլացող քայլերով։ Ամբոխը նորան ծաղրում էր, իսկ նա գնում էր, կարծես,

խորասուզուած խորհրդածութեանց մէջ հանգերձեալ կեանքի մասին. նա, կարծես, անջատուած էր աշխարհից և ամենամին ուշադրութիւն չէր դարձնում ատելութեան աղաղակներին. նա կարծես, մարդկային ներմանց չափից աւելի ներող և մարդկային կարեկցութեանց չափից աւելի կարեկցող էր. նա արդէն համակուած էր յաւիտենականութեամբ, արդէն բարձր էր կանգնած մարդկային չարիքից, խաղաղ էր, չափազանց հեղ էր և միւնոյն ժամանակ տոգորուած համաշխարհային հսկայական տիրութեամբ:

— Դու ես ճշմարտութիւնը, դու, դողդոջուն ըլլթունքներով արտասանեց Անթէան:

Ժողովրդի գնացքն այժմ շարժվում էր ուղիղ պատգարակի մօտով, պատահեց, որ նա մինչև անգամ մի ըոտէ կանգ առաւ, երբ առաջից գնացող զինորներն այդ ընդհանուր խառնակութեան մէջ աշխատում էին ճանապարհ բաց անել: Անթէան հիմա տեսնում էր Նազովրեցուն միայն մի քանի քայլ հեռու. նա տեսաւ, ինչպէս քամին ծածանում էր նորա մազերի հիւսերը, տեսաւ, ինչպէս ծիրանին նորա դժողովն ու թախծալի դէմքի վերայ ձգել էր իր կարմրագոյն շողբը . . . Խուժանը մղուելով գէպի նա նեղ կիսալմէսնի ձեռվ շրջապատեց նորան, այնպէս որ զինորներն ստիպուած էին տէգերից պատնէշ:

կանգնեցնելով դատապարտելին պահպանել ժողովրդի կատաղութիւնից: Ամեն ուրեք երեսում էին սեղմած կուռիներով առաջ մեկնած ձեռներ, բներից դուբս ցցուած աչքեր, պսպղուն ատամներ, կատաղի շարժումներից ծածանուող մօրուքներ և փրփրած բորաններ, որոնք արտավիժում էին անէծքներ իսկ նա նախում էր շուրջը և կարծես, ցանկանում էր հարցնել. „Ես ձեզ ինչ եմ արել“:

Ապա, աչքերը դէպի երկինք բարձրացնելով սկսեց աղօթել և ներել:

— Անթէա, Անթէա, բացականչեց Կիննան:

Բայց, թուում էր, թէ Անթէան չէր լսում նորա կանչը: Նորա տչքերից հոսում էին արտասուքի կուլոր կաթիլներ. նա մոռացաւ իր հիւանդութեան մասին, մոռացաւ այն, որ ինքն ահա քանի օր է, պատգարակից չէ բարձրացել, և յանկարծ դողդոջուն մարմնով վեր թուաւ տեղից և ինքնամուացութեան մէջ, որ առաջանում էր վշտից, կարեկցութիւնից և այն ատելութիւնից, որ նա տածում էր դէպի կոր ամբոխի բացականչութիւնները, ու սկսեց իւլել իր պատգարակը զարդարող լեռնալին մշկունու և խնձորենու թարմ ծաղիկները և փոել նոցանազովեցու ոտների տակ:

Տիրեց բոպէական լոռութիւն: Ամբոխը՝ տեսնելով որ այդ մեծատոհմ հոռվմէուհին դատապարտեալին

յարգանքներ է մատուցանում՝ զարմացաւ։ Նա իր
հայացքը ձգեց նորա գունատ ու հիւանդ դէմքի
վերայ, և շրթունքներն սկսեցին շարժուել, կարծես,
նա օրհնում էր Անթէալին։ Անթէան վերստին ընկ-
նելով պատգարակի բարձերի վերայ՝ զգաց, որ իր
վերայ թափվում է լրսի, բարութեան, ողորմածու-
թեան, զուարթութեան, յոյսի և երջանկութեան ծո-
վը, — Եւ նա դարձեալ սկսեց մտմտալ.

— Դու ես ճշմարտութիւը։

Սպա արտասուքի նոր կոհսկներ փալլեցին նորա
աչքերում։

Բայց դատապարտեալին առաջ հրեցին՝ պատգա-
րակից մի քանի տասնեակ քայլ հեռաւորութեամբ
գտնուող տեղը, ուր արդէն ժայռի ճեղքուածքի մէջ
ամրացրած էին երեք սիւներ։ Ամբոխը դարձեալ շըր-
ջապատեց նորան, բայց որովհետև այն տեղը բա-
ւական բարձր գիշք ունէր, Անթէան դարձեալ շու-
տով տեսաւ նորա թախծալի գունաթափ դէմքն ու
փշեալ պսակը։ Զինւորները մի անգամ ևս գաւագան-
ներն առնելով բաւական հեռու քշեցին ամբոխը,
որպէս զի նա չխանգարէ պատիժը։ Նոքա սկսեցին
երկու աւազակներին կտպուել կողքի խաչերի վերայ։
Երրորդ խաչը կանգնած էր մէջ տեղում։ Նորա վե-
րեւում գամով ամրացրած էր մի տոմսակ, որն հե-
տզհետէ սաստկացող քամուց բարձրանում ու տա-

տանվում էր։ Երբ վերջապէս, զինւորները մօտենա-
լով նազովրեցուն՝ սկսեցին նորա շորերը հանել,
ամբոխի մէջ լսելի եղան ձայներ։ — Թագաւոր, թա-
գաւոր, մի թոյլ տայ, որ քեզ խաչեն։ Թագաւոր,
ուր են քո զօրախմբերը. պաշտպանիր, եթէ կարող
ես։ — Ժամանակ առ ժամանակ լսվում էին ծիծաղի
ձայներ, որոնք և գրաւում էին ամբոխի ուշադրու-
թիւնը, այնպէս որ լեռան ապալեր գագաթն լան-
կարծ աղմկվում էր միահամուռ ծիծաղով։ Այդ մի-
ջոցին դատապարտեալին թիկունքի վերայ գետնին
պառկեցրին, որպէս զի ձեռները գամելով տախտակին՝
բարձրացնեն գլխաւոր սիւնի վերայ։

Այդ տեղ մի ինչ որ մարդ, որ պատգարակից
շատ հեռու չէր գտնվում և հագած ունէր սպիտակ
երկար վերարկու, լանկարծ գետնի վերայ փռուեցաւ,
փոշի և մանր քարեր ցանեց գլխին և սարսափահար
ու լուսահատական ձայնով գոռաց։

— Ես բորոտ էի և նա սըբեց ինձ. ինչո՞ւ են խա-
չում նորան։

Անթէալի դէմքը գունատուեց որպէս թաշկինակ։

— Նա նորան բժշկել է . . . լսում ես, Կայոս,
ասաց նա։

— Գուցէ գու ուզում ես տուն վերադառնալ,
հարցրեց կիննան։

— Ոչ, ես ալստեղ կը մնամ։

Եւ կիննալին տիրեց փոթորկանման մի անսահման ու անմիտ յուսահատութիւն, թէ ինչու ինքը չ'հափրեց նազովիցուն, որ նա բժշկէր Անթէալին:

Բայց այդ բոպէին զինւորները մեխերը դնելով նազովիցու ձեռներին՝ սկսեցին գամել: Լուեց երկաթի խուլ զնդոցը, որը շուտով աւելի պարզուեց, մեխերի սուր ծայրերն անցնելով մարմնի միջով սկսեցին խորանալ փալտի մէջ: Ամբոխւ վերսափն լուեց, լրեց յագենալու այն աղաղակներով, որ գառն տանջանքների ազդեցութեան ներքոյ կարող էին դուրս թռչել նազովիցու բերանից: Բայց նա լուռ մնաց, միայն բարձրում լսվում էին մուրճերի չարագուշակ ու սուկալի հարուածները:

Վերջապէս, դորջն աւարտուեցաւ, և խաչաձև տախտակը մարմնի հետ միասին բարձրացին վերև: Պատմի անթերի կատարման վերահասու հարիւրապետը արտասանում էր, կամ, լաւ է ասել, միտ պաղպաղ ձայնով երգում էր հրամանի բառերը, որի համաձայն և զինւորներից մէկն սկսեց գամել նորա ոտները:

Սակայն առաւօտեանից հօրիզոնի վերայ կուտակւագ ամպերը ծածկեցին արեգակը: Հեռաւոր ըլուբներն ու ժայռերը, որոնք փալլում էին արեգակի ճառագալթների տակ, մոայիցան: Լուսն սկսեց խաւարել: Զարագուշակ պղնձագոյն կարմիր աղջամուղ-

ջն սքօղեց շրջակալիքը, և որքան աւելի էր թագնվում արեգակը ամպերի խորութեան մէջ, նոյնքան և աւելի էր թանձրանում այդ խաւարը: Կարծես, մի աներեւոյթ ձեռք վերևից շառագոյն խաւար էր սփոռում երկրի վերայ: Հրաբորբոք քամին փչեց մի անգամ, կրկին անգամ ևս և ապա խաղաղուեց: Օդը հեղձուցիչ դարձաւ:

Յանկարծ շիկագոյն ամպերի այդ վերջին մնացորդներն էլ սեացան: Դաժան՝ գիշերնեւայ նման ամպերն սկսեցին սկսոյտ գալ և վիթխարի ալիքների նման տարութերուելով լողալ գէպի Գողգոթայի բարձունքը և գէպի քաղաքը: Փոթորիկը մօտենում էր: Աշխարհը լցուեց ահով ու սարսափով:

—Վերագառնանք տուն, գարձեալ կրկնեց կիննան:

—Կրկին, կրկին ուզում եմ տեսնել նոյնան, պատասխանեց հիւանդը:

Որովհետեւ խաւարը ծածկեց խաչափալուրի վերայ կախ ընկած մարմինները, ուստի կիննան հրամակեց պատգարակը մօտ տանել: Նոքա այնքան մօտեցան, որ միայն մի քանի քայլ էր նոցա բաժանում խաչեց: Անթէան աչքերը բարձրացրեց: Խաւարամած ձողի վերայ երևում էր խաչեցեալի մարմինը, որն այդ ընդհանուր միթութեան մէջ, կարծես գործուած լինէր լուսնի արծաթագոյն ճառագալթներից: Արագ շնչառութիւնից նորա կուրծքը եւեէջներ էր

անում. գլուխն ու աչքերը դեռ բարձրացրած էին
դէպի երկինք:

Այստեղ՝ ամպերի խորքում խուլ մոնշիւն: Որո-
տըն արթնացաւ, վեր կացաւ, զարհուրելի դղրդմամբ
տրեւելքից դէպի արևմուտք սլացաւ և ապա, կար-
ծես, գահավիժուելով դէպի անյատակ անդունդը,
սկսեց աւելի ցածր և ցածր լսուել. նա մերի խա-
ղղում էր, մերի զօրեղանում,—վերջապէս որո-
տաց, որպէս թնդանօթի բամբիւն ու երկիրը հիմն
իվեր շարժուեց:

Եւ իսկոյն կապտագոյն կալծակը կտրատեց ամ-
պերը, լուսաւորեց երկինքը, երկիրը, խաչերը, զին-
ւորների սաղաւարտները և ոչխարների հօտի նման
'ի մի խմբուած անհանգիստ յուզուած ամբոխը:
Կալծակից յետոյ տիրեց աւելի թանձը խաւար: Պատ-
գարակի մօտ կանանց լացի ձախներ էին լսվում, որ
նոյնպէս մօտեցան խաչին: Սոսկալի էր այդ հեկե-
կանքը ընդհանուր լուսութեան մէջ: Ամբոխի մէջ
կորչողներն այժմս իրար էին կանչում: Տեղ տեղ
լսվում էին ահաբեկ ձախներ.

—Ո՞հ, ոհ, ոհ, վայ մեզ, վայ արդար մարդու
են արդեօք խաչել:

—Որը ճշմարտութիւն էր քարոզում. վախ, վախ:

—Որը մեռելներին էր լարութիւն տալիս:
Իսկ մի այլ ձախն բացականչում էր.

—Վայ քեզ, Երուսաղէմ.
Երրորդը նոյնպէս.
—Երկիրը շարժուեց.

Երկբորդ կալծակը բացեց երկնքի խորութիւնը
և այնտեղ կարծես երկեցաւ հրատիպ պատկերներ:
Զայները լրեցին, կամ աւելի հաւանական է ասել,
կորան քամու սուլոցի մէջ, որն յանկարծ այնպիսի
ուժգնութեամբ փշեց, որ թոցրեց բազմաթիւ թաշ-
կինակներ ու վերարկուներ և սփռեց նոցա օդի մէջ:

Զայները նորից սկսեցին աղաղակել.

—Երկիրը շարժուեց:

Ոմանք սկսեցին փախչիլ: Միւսներին կաշկանդել
էր իրարանցումը, և նոքա կանգնած էին շուարած,
առանց մտածել կարողանալու, միտին այն աղօտ
տպաւորութեամբ, թէ հէնց հիմա կատարուեց մի
ինչ որ սարսափի:

Բայց խաւարն յանկարծ սկսեց նօսրանալ. կատաղի
քամին տակն ու վելայ արաւ ամպերը, ոլորում էր
նոցա և պատառոտում, որպէս վթած ցնցոտիներ . . .
Լոյն աստիճանաբար աւելանում էր, վերջապէս եր-
կինքը բացուեց և այնտեղից յանկարծ այնպիսի
առատութեամբ սկսեց բղխել արեգակի լոյսը, որ
իսկոյն լուսուրոեց լեռան գագաթը, մարդկանց ահա-
բեկուած դէմքերն ու խաչերը:

Նազովրեցու մեղրամոմի նման գունատ գլուխը

ցած էր ընկել կուրծքի վերայ: “Սորա կոպերը փակ էին, և շրթունքները կապտած:”

—Մեռել է, շըշնչաց Անթէան:

—Մեռել է, կրկնեց Կիննան:

Ոյդ միջոցին հարիւրապետը տէգով ծակեց Նազովեցու կողք: Տարօրինսկ բան է. լոյսի վերստին ծագելը ու մեռածի կեբարանքը, կարծես հանգըստացրին ամբոխը: Ֆողովուրդն հիմա սկսեց աւելի և աւելի մօտ գնալ, մանաւանդ որ զինուրներն այլ ևս չին կտրում նոցա ճանապարհը: Խոժանի մէջ ձայներ էին լսվում.

—Ցած արի խաչից, ցած արի խաչից:

Անթէան միանգամ ևս աչքերը ձգեց այդ թալկացած ու կախ ընկած գլխի վերայ և ապա ցած ձայնով, կարծես, ինքն իրան ասաց.

—Միթէ լարութիւն կառնէ . . .

Նա տեսնելով մահը, որը կապտագոյն բծեր էր շաղել նորա աչքերի ու շրթունքների վերայ, տեսնելով այդ անընսկան ձգուած ձեռները, տեսնելով այդ անզգայ ու անշարժ մարմինը, որն մահի ծանրութեան ներքոյ քաշ էր ընկել դէպի ներքեւ կասկածեց և նորա ձայնը դողդողաց յոււահատական երկբայութեամբ:

Կասկածը ոչ պակաս կրծում էր և Կիննայի հոգին: Նա նոյնպէս չէր հաւատում, թէ Նազովեցին

յարութիւն կառնէ, բայց հաւատում էր, որ եթէ նա կենդանի լինէր, միակ նա կարող էր իր բարի թէ չար զօրութեամբ փրկել Անթէալին:

Իսկ այդ միջոցին աւելի բազմաթիւ ձայներ աղաղակում էին.

—Ցած արի խաչից, ցած արի խաչից:

—Ցած արի, յուսահատութեամբ կրկնեց և Կիննան իր մտքում, բժշկիր նորան և տիրիր իմ հոգուն:

Երկինքը պարզուեց. բլուները դեռ ևս մառախուղի մէջ էին, բայց Գողգոթալի և քաղաքի վերայ ոչ մի ամպ չկար. Անտոնիոսի աշտարակը փայլում էր արեգակի տակ՝ որպէս երկրորդ արեգակ: Օդը թարմացաւ, և այնտեղ երկեցան անհամար ծիծեռնակներ: Կիննան հրամայեց վերադառնալ:

Կէսօլն արդէն վաղուց անցել էր: Վօտենալով տանը՝ Անթէան յանկարծ ասաց.

—Հիկատան ալսօր չերկեցաւ:

Կիննան նոյնպէս մտածում էր այդ մասին:

VIII.

Տեսիլքը չերկեցաւ և հետևեալ օրը: Հիւանդն արասանվոր հրձուանքի մէջ էր, որովհետև Կեսարիալից եկել էր Տիմոնը, որն անհանգիստ լինելով ալլկայ կեանքի մասին և վախեցած Կիննայի նամակներից՝ մի քանի օր առաջ թողել էր Աղեքսան-

Դրիան, որպէս զի մահուանից առաջ մի անգամ ևս տեսնուի իր միակ որդու հետ: Յոյսը նորից սկսեց բաղմել կիննալի սրտի դռները, պահանջելով, որ նա ներս ընդունի նորան: Բայց նա չէր համարձակվում նորա համար բաց անել դռները, նա չէր համարձակվում յուսալ: Անթէալին տանջող ու մաշող տեսիլքների մէջ, ճշմարիտ է, լինում էին ընդմիջումներ և Աղեքսանդրիայում ու անսպատում, բայց ոչ երկու, այլ մի օրով: Ներկայ թեթևութեան պատճառները կիննան վերագրում էր Տիմոնի գալստեան և խաչի տպաւորութեանց, որոնք այնքան էին գրաւել հիւանդի միտքը, որ նա, մինչեւ անգամ, հօր հետ չէր կարողանում ուրիշ նիւթի վերայ խօսել: Տիմոնը լսում էր նոյնպէս ուշադրութեամբ, չէր հակածառում, խորհրդածութիւններ էր անում և ամենայն խնամքով հարցումներ էր անում նազովրեցու վարդապետութեան մասին, սակայն Անթէան իմանում էր միայն այն, ինչ որ պատմել էր նորան Պիղատոսը:

Անթէան ընդհանրապէս իրան առողջ և ուժեղ էր զգում, և երբ կէս օր եղաւ ու անցաւ, նորա աչքում փայլեցին կատարեալ զուարթութիւն: Նա մի քանի անգամ այդ օրն յաջող անուանեց և խընդրեց ամռւսնուն գրել նորան:

Բայց օրն իսկապէս տխուր էր և անախորժ:

Սուաւօտից սկսած անձրեւ էր գալիս, սկիզբը խոշոր և ապա մանր, որ մաղվում էր ցած ու միակերպ ձգուած ամպերից: Միայն իրիկնադէմին երկինքն սկսեց պարզուել և արեգակի հրալին վիթխարի գունդըն դուրս նալեց մառախուղի միջից, ծիրանի գոյնով ներկեց ու ոսկեզօծեց ամպերը, մոխրագոյն քարերը, տան սիւնազարդ պատշգամի սպիտակ մարմարինը և անթիւ ու անհամար կայծերի միջով գլորուեց դէպի Միջերկրական ծովը:

Դորա փոխարէն հետեւեալ օրը եղանակը հրաշալի էր. օրը սպառնում էր հրատապ լինել, բայց առաւոտը թարմ և զով էր, երկնքի վերայ ոչ մի ամպ չէր երեսում: Խակ երկերն ընկղմուած էր մի այնպիսի կապուտակ աւազանի մէջ, որ բոլոր առարկաները երկնագոյն էին երեսում: Անթէան հրամայեց իրան տանել իր սիրած պիստակենու տակ, որպէս զի այն բարձրութիւնից, ուր կանգնած էր ծառը, կարողանալ լիապէս հրճուել այն ուրախ ու երկնագոյն տեսարաններով, որ պատկերանում էին հեռուում: Կիննան և Տիմոնը միշտ անբաժան էին պատգարակից և ուշադրութեամբ դիտում էին հիւանդի դէմքի փոփոխութիւնները: Նորանում կար մի ինչոր սպասողական անհանգստութիւն՝ վրդովմունք, բայց չկար այն մահասարսուու արհաւիրքը, որը համակում էր նորան կէսօրներից առաջ: Նորա աչքերը

պսպղում էին աւելի կենդանի փայլով, իսկ այտերը վարդագունուեցան թեթև կարմրութեամբ; Կիննան, իհարկէ, հիմա մտածում էր բոպէներով, թէ Սնթէան կարող է առողջանալ. և երբ մտածում էր այդ մասին, նա ուզում էր գէտին փռուել, հեկեկալ ուրախութիւնից, օրհնել աստռածներին և այն ժամանակ նորան նորից պաշարում էր այն վրդով՝ մունքը, թէ դա մարուող լուսատուի վերջին ցոլքն է միան:

Ցանկանալով մի որ և է տեղից լոյսեր քաղել՝ նա երեմն նայում էր Տիմոնի վերայ, բայց գուցէ և վերջինի գլխում պտտում էին նոյն մտքերը, որովհետև նա խոյս էր տալիս նորա հայացքներից: Մնացածներից ոչ ոք ոչ մի բառով անդամ չէր լիշեցնում, թէ կէսօրը մօտենում է: Բայց կիննան ամեն բոպէ իր հայեացքը ձգում էր ստուերների վերայ և սերտ ՚ի թինտ նկատում էր, որ նոքա հետզհետէ աւելի և աւելի կարճանում են:

Եւ նոքա նստում էին, կարծես, ընկմուած խոր մտածունքի մէջ. ամենից քիչ, կարելի է, անհանգիստ էր լինում Սնթէան ինքը: Պառկած բաց պատգարակի վերայ և գլուխը լինելով մետաքսեայ ծիրանադոյն բարձերի վերայ՝ նա հրճուանօք ծծում էր մաքուր օդը, որ բերում էր քամին արևմուտքի հեռաւոր ծովից: Կէս օրուայ գէմ այդ քամին էլ

դադարեց. շոգն անտանելի դարձաւ: Արեւի կիզող ճառագայթների ազդեցութեան տակ ժարուերի վերայ աճող խաշանճը և նարդոսի թփերն սկսեցին արձակել զօրեղ և արբեցուցիչ հոտ: Խումբ խումբ կուտակուած հողմածաղիկների վերայ օրօրվում էին թիթեռնիկները: Փոքրիկ մողէսները, որոնք արդէն ընտելացել էին այդ մարդկանց և պատգարակին, ժայռերի արանքից վստահ, բայց և զգոյշ քայլերով դուրս էին սողում քարերի վերայ մէկը սիւսի յետեից:

Ամբողջ աշխարհը նիրհում էր ճաճանչափայլ խաղաղութեան, անամպ սեղմութեան և կապուտակ քնածութեան մէջ: Հստ երևոլթին, կիննան ու Տիմոնն էլ խորասուզուած էին այդ արեգակային անդուրութեան մէջ: Հիւանդը փակեց աչքերը, կարծես մի թեթև քուն եկաւ վերան, — և ոչինչ չէր աղմկում լուսութիւնը, բացի այն լոգւոցներից, որոնք ժամանակ առ ժամանակ դուրս էին թռչում նորա կրծքից:

Այն ինչ կիննան նկատեց, որ ստուերը կորցնելով իր ձուաձեռութիւնը՝ ընկել է ուղիղ ոտների տակ:

Կէս օր էր:

Յանկարծ Սնթէան բաց արեց աչքերը և մի ինչոր տարօրինակ ձախնով ասաց.

Կիննա, տուր ինձ ձեռդի:
Նա վեր թռաւ տեղից, և նորա բոլոր արիւնո
սառեց. ահա, ահա վերալ է հասնում տեսիլքների
սոսկալի ժամը:

Իսկ նորա աչքերը քանի գնում աւելի և աւելի
լայն էին բացվում,

— Տեսնում ես, ասում է նա, — ինչպէս այնտեղ
օդի մէջ հաւաքվում ու միանում է, ինչպէս գող-
գողում, փայփրում ու դէպի ինձ է մօտենում:

— Անթէն, մի նախիր դէպի այն կողմը, գոռաց
կիննան: Բայց ոչ հրաշք, նորա դէմքի վերալ չկար
սարսափ, շրթունքները բացուեցան, աչքերն աւելի
և աւելի լայն էին բացվում. մի ինչ որ անսահման
բերկրութիւն լուսաւորում էր նորա դէմքը:

— Լոլսի սիւնը դէպի ինձ է գալիս, մօտենում
է, շարունակեց նա. — Տեսնում եմ: Դա նա է, դա
նազովքցին է . . . Ժպտում է . . . Ո՞վ հեղ . . .
Ո՞վ ողորմած . . . Ժակծակուած ձեռները դէպի
ինձ է մեկնում, կիննա: Նա ինձ բերում է առող-
ջութիւն, փրկութիւն և ինձ իրան մօտ է կանչում:

Իսկ կիննան սաստիկ գունատուեց ու ասաց.

— Ուր էլ որ չկանչէ նա, — գնանք նորա յե-
տելից:

Մի ըռպէից լետոյ դէպի քաղաքը տանող քար-
քարոտ ճանապարհի վերալ երևեցաւ Պոնտացի

Պիղատոսը: Դեռ չմօտեցած՝ նորա դէմքից երևում
էր, որ նա բերում էր մի ինչ որ նորութիւն և
որը նա, իբրև խոհեմ ու շրջահայեաց մարդ, հա-
մարում էր տգէտ ու գիւրահաւան ամբոխի մի
նոր հրէշալին առասպէլ: Դեռ նա հեռուից, ճա-
կատի քրտինքը սրբելով սկսեց գոռալ.

— Երևակալեցէք, նոքա գարձեալ բարբաջում
են, թէ նա յարութիւն առաւ:

Վ Ե Ր



Կամաց ընթեր աղքա ճականած ամի պատուի
 և ամենայն դու ամենի ով ենուն առ ով ով
 ու բան բահաւածոց ու ենուն ազգ առ ով ով
 ին փեսուն մատասդ ու աժք ով ենուն
 ու օբյուն ու ու ու աշխատ միացուց ով
 արտաք ընթա խոհց զամբար փառ
 և ու ու ամենայն առ ով աշխատ ամ ամ
 արտաք ընթա խոհց զամբար փառ
 և ու ու ամենայն առ ով աշխատ ամ ամ


Վ Ռ Ի Պ Ա Կ Ն Ե Բ :

Երես	Տող	Սխալ	Ուղիղ
1	1	Հենրիկսս	Հենրիկոս
3	7	Քայքայուած	Քայքայուած
5	11	յուներէն	յունարէն
8	1	սիգապանձ	սիգապանձ
"	20	արհամարում	արհամարհում
12	17	սկենախօսութիւն	պերճախօսութիւն
"	19	հմտութեանը	հմտութեանը
15	22	նման	նման
"	23	ուրիկ	ուրիշ
16	2	տարբերութիւն	տարբերութիւն
20	20	միւս	միւս
28	2	վեհապանձ	վեհապանձ
27	7	հոռովմայեցոց	հոռվմայեցոց
31	22	Ողջ յն	Ողջոյն
82	8	խորտակ էին	խորտակէին
36	19	կանգոն	կանգուն
87	9	բոլորովին	բոլորին
38	21	հաղէսում	հանդէսում
40	23	ներքում	ներքեում
43	15	սրբան	սրբան
45	4	չորորդները	չորրորդները
47	10	պատրաստում	պատրաստվում
"	16	իւրաքանչիւրի	իւրաքանչիւրի
"	23	վտանքի	վտանգի
48	12	ընտանիքներով	ընտանիքներով
49	4	էի նայլի	էին այլի
53	5	ըորաններ	ըերաններ
54	9	հշմարտութիւն	հշմարտութիւն
59	23	լուսաւորեց	լուսաւորեց
63	7	պատշգամի	պատշգամի
64	5	դէտին	դէտին
"	12	պտտաւմ	պտտաւմ
"	14	սերտ	սիրտ

3364

ԱՅԾՎԱՅԱՆ

բառ	բառ	բառ	անուն
սարդարն	սարդարն	1	4
հաւաքագազ	հաւաքագազ	2	8
մէկան այ	մէկան այ	11	6
եմորարժի	Եմորարժի	12	8
և ուղարկածու	և ուղարկածու	02	*
մաթիսավաճրի	մաթիսավաճրի	71	24
շնուռ միտունի՛	շնուռ միտունի՛	01	*
նախ	նախ	22	64
մաթիսավաճրու	մաթիսավաճրու	32	*
ոչին	ոչին	2	01
եմորանձի	եմորանձի	02	02
բարձրակիսու	բարձրակիսու	5	49
մակարի	մակարի	09	18
ոցի բանակի	ոցի բանակի	8	93
մարտակի	մարտակի	01	67
ճիշդար	ճիշդար	0	76
և ուղարկած	և ուղարկած	12	88
և ուղարկած	և ուղարկած	83	04
մաքրի	մաքրի	61	31
պղձմանցոյն	պղձմանցոյն	4	61
և ուղարկածու	և ուղարկածու	01	71
մաթիսավաճրի	մաթիսավաճրի	01	*
մակարականի	մակարականի	02	*
մակարականի	մակարականի	21	61
մակարականի	մակարականի	4	81
մակարականի	մակարականի	6	86
պղձմանցոյն	պղձմանցոյն	0	16
ընդուռ առ այ	ընդուռ առ այ	22	86
մակարականի	մակարականի	5	80
մակար	մակար	6	10
և ուղարկածու	և ուղարկածու	21	*
ուղին	ուղին	11	*



4855~

